

Հայաստանի Հանրապետությունում երեխայի սեռի խտրական ընտրության և սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման կանխարգելմանն ուղղված պետական քաղաքականության և ծրագրերի

Մշտադիտարկման զեկույց

Պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքար
“Combating Gender-Biased Sex Selection in Armenia”

Ծրագիրը ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից
This project is funded by
the EUROPEAN UNION

Մարդկային զարգացման
միջազգային կենտրոն
International Center for
Human Development

Հայաստանի Հանրապետությունում
երեխայի սեռի խտրական ընտրության և սեռով
պայմանավորված
հղիության արհեստական ընդհատման
կանխարգելմանն ուղղված
պետական քաղաքականության և ծրագրերի

Մշտադիտարկման զեկույց

Երևան 2017

Մշտադիտարկման զեկույցը պատրաստվել է Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող և Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի (ՄԶՄԿ) կողմից՝ «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության, Արմավիրի զարգացման կենտրոնի (ԱԶԿ) և Մարտունու կանանց համայնքային խորհրդի (ՄԿՀԽ) հետ համագործակցությամբ իրականացվող «Հայաստանում պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքարի» ծրագրի շրջանակներում: Մշտադիտարկումը կատարվել է ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի մայիսի 8-ի թիվ 1129-Ա և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2015 թվականի մայիսի 13-ի թիվ 75-Ա/1 համատեղ որոշմամբ հաստատված Սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելման ծրագրի 1.1. կետի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (ԱՍՀՆ), ՀՀ առողջապահության նախարարության (ԱՆ) և ՄԶՄԿ-ի միջև 2015 թվականի հունիսի 17-ին ստորագրված Համագործակցության հուշագրի համաձայն:

ՄԶՄԿ-ի հանձնարարությամբ մշտադիտարկումն իրականացրել է մշտադիտարկման խումբը:

Խմբագրական խորհուրդ՝

Վահան Ասատրյան
Նվարդ Մանասյան
Քրիստինա Սարգսյան
Աշոտ Խուրշուդյան, տ.գ.թ.
Արմեն Գալստյան
Պարույր Ամիրջանյան
Անահիտ Մանասյան

Բովանդակություն

Հապավումներ 4

Տեխնիկական ներածություն 5

Առաջաբան 7

Ամփոփագիր 9

Նախապատմություն 14

Վեց տարվա հետհայաց. հիմնական համեմատություններ և փոփոխություններ 17

Տնային տնտեսության եկամուտը և զբաղվածության դինամիկան 22

Ձայնի իրավունքը և ներընտանեկան որոշումների կայացումը 28

Երեխայի խնամքի պարտականությունները և ընտանիքին առաջարկվող ծառայությունները 31

Սեռի նախապատվությունը Հայաստանում 35

Եզրակացություններ 38

Առաջարկություններ 39

Հապավումներ

ԱԶԿ	«Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԱՆ	Առողջապահության նախարարություն
ԱՍՀՆ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ԵՄ	Եվրոպական Միություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՄԱԲՀ	ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ
ՄԱՄՀ	ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ
ՄԶՄԿ	«Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» ՀԿ
ՄԿՀԽ	«Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ
ՍԴՋ	Սեյվ դը Չիլդրեն Ինտերնեյշնըլ
Փոխցանց	«Տեղական մասնակցության և ոչ-խտրականության» փորձի և գիտելիքի փոխանակման ցանց
GIUSSEPPE	Պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելման քաղաքականության գծով փորձագետներ

Տեխնիկական ներածություն

1. Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը (ՄԶՄԿ) պետական մարմիններում քաղաքականության մշակման պատասխանատուների, քաղաքացիական հասարակության, գիտակրթական համայնքի և մասնավոր հատվածի շահագրգիռ կողմերի, տեղական համայնքերի, Փոխցանցի անդամների և միջազգային զարգացման գործընկերների ուշադրությանն է ներկայացնում Հայաստանի Հանրապետությունում պտղի սեռի խտրական ընտրության և սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման կանխարգելմանն ուղղված պետական քաղաքականության և ծրագրերի Մշտադիտարկման երկրորդ զեկույցը:

2. Քաղաքականության մշակման ու իրականացման մշտադիտարկումը քաղաքականության գործընթացների անբաժանելի մասն է: Այն ծրագրերի կառավարման, պրակտիկայի բարելավման և հաշվետվողականության ապահովման կարևոր գործիք է: Քաղաքականության մշտադիտարկումը գործընթաց է, որի միջոցով շահագրգիռ կողմերը հետևում են քաղաքականություններին և գնահատում դրանք՝ ապահովելով վերջիններիս նպատակային մշակումը, հաստատումը և իրականացումը: Այն սովորաբար ներառում է քաղաքականության միջավայրի, շահագրգիռ կողմերի ներգրավվածության մակարդակի և որակի գնահատման, քաղաքականության մշակման և դրա օրենսդրական կիրարկման փաստաթղթավորման, քաղաքականության իրականացման՝ ֆինանսավորման և միջոցառումների պլանավորման, ինչպես նաև իրականացման արդյունքների գնահատման գործընթացները:

3. Քաղաքականության փոփոխությունը չափազանց բարդ գործընթաց է, որը ձևավորում են բազմաթիվ փոխգործակցող ուժեր և դերակատարներ: Շոշափելի ակնկալվող փոփոխությունների հասնել հազվադեպ է հաջողվում, իսկ քաղաքականության վրա ազդեցություն ունեցող գործունեությունը հաճախ բացառիկ է և գրեթե անկրկնելի՝ լավագույն պրակտիկայի տարածման խոչընդոտները բազմաթիվ են: Միջամտության ընթացքում և դրան հաջորդող ժամանակաշրջանում քաղաքականության համար անհրաժեշտ տեղեկատվության մշակումն ու օգտագործումը սովորաբար համարվում է հաշվետվողականության համակարգերի, կատարողականի ներկայացման և փորձից դասեր քաղելու ու հետագա աշխատանքը բարելավելու առանցք:

4. Մշտադիտարկման առաջին զեկույցը պատրաստվել և հրապարակվել է 2016 թվականի վերջին: Դրա ուշադրության կենտրոնում պետական այն քաղաքականություններն են, որոնք կարող էին բարձրացնել աղջիկ երեխայի արժեքը ծնողների, ընտանիքի և հասարակության համար: Այն համադրել է պետական և ոլորտային հանրային քաղաքականությունների, ռազմավարական ծրագրերի, գործողությունների ծրագրերի և իրավական փաստաթղթերի վերլուծությունն ու ուսումնասիրությունը՝ հատուկ ուշադրություն դարձնելով Հայաստանում պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելման գործում դրանց ազդեցության վրա: Զեկույցում ներկայացվել են նաև քաղաքականության վերաբերյալ առաջարկություններ՝ ուղղված քաղաքականություն մշակողներին, քաղաքացիական հասարակությանը, իրավապաշտպաններին և միջազգային զարգացման գործընկերներին՝ Հայաստանում երեխայի սեռի խտրական ընտրության կանխարգելման ոլորտում քաղաքականության հարցերի շուրջ երկխոսությունը խթանելու նպատակով:

5. Մշտադիտարկման սույն զեկույցը կենտրոնանում է քաղաքականության ազդեցության հինգ առանցքային տարրերի վրա (Jones and Villar, 2008; Keck and Sikkink, 1998).

   - **Բանավեճի ձևավորում և քաղաքական օրակարգում խնդիրների ներառում**. ինչը ենթադրում է վերաբերմունքի փոփոխություն, նոր խնդիրների վրա ուշադրության հրավիրում և հիմնական շահագրգիռ կողմերի իրազեկվածության, վերաբերմունքի կամ ընկալումների վրա ներազդում:

   - **Կառավարության և քաղաքականության այլ դերակատարների կողմից դիսկուրսային հանձնառությունների ստանձնման խրախուսում**. կարևորվում է, լեզվի և

հռետորաբանության վրա ազդեցությունը, օրինակ՝ առանձին խմբերի ճանաչման կամ միջազգային հայտարարագրերին միանալու նպատակով:

- **Ընթացակարգային փոփոխությունների ապահովում ազգային կամ միջազգային մակարդակով**. փոփոխություններ քաղաքականության որոշումների կայացման գործընթացում, այդ թվում՝ քաղաքականության հարցերի շուրջ երկխոսության համար նոր հնարավորությունների ձևավորումը:
- **Քաղաքականության բովանդակության վրա ներազդում**. թեպետ օրենսդրական փոփոխությունը քաղաքականության փոփոխության հիմնական արդյունքը չէ, այն հանդիսանում է այդ փոփոխության կարևոր տարրերից մեկը:
- **Հիմնական դերակատարների վարքագծի փոփոխության վրա ազդեցության ապահովում**. քաղաքականության իմաստալից և կայուն փոփոխություն կատարելու համար հարկավոր է տարբեր մակարդակներում կատարել վարքագծի և քաղաքականության իրականացման փոփոխություններ:

6. Մշտադիտարկման զեկույցը լրացուցիչ ուշադրություն է դարձնում ՄԱԲՀ-ի (2011) և ՄԶՄԿ-ի (2017) կողմից իրականացված հետազոտությունների տվյալների համեմատական վերլուծությանը, միաժամանակ կենտրոնանալով վերը նշված տարրերի վրա:

7. Մշտադիտարկումն իրականացրել է ոլորտային փորձագետների Մշտադիտարկման խումբը՝ Ծրագրի գլխավոր տեխնիկական խորհրդականի ղեկավարությամբ: Մշտադիտարկման խումբը օգտագործել է նաև Ծրագրի շրջանակներում գործող Պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելման քաղաքականության գծով փորձագետների (GIUSSEPPE) մշակած քաղաքականության վերլուծությունները և քաղաքականության փաստաթղթերը: Խումբը սերտորեն համագործակցել է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության, պետական այլ մարմինների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի, Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի, Հանրային խորհրդի, Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության, Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի, մարզերում գործող գենդերային հարցերով հանձնաժողովների, քաղաքացիական հասարակության և միջազգային զարգացման գործընկերների հետ:

8. Մշտադիտարկման խմբի հիմնական գործիքը եղել է փաստաթղթային ուսումնասիրությունը: Բացի փաստաթղթերի ուսումնասիրությունից, փորձագիտական հարցումներ են իրականացվել ոլորտի փորձագետների և պրակտիկ մասնագետների, այդ թվում՝ «Տեղական մասնակցության և ոչ խտրականության» փորձի և գիտելիքի փոխանակման ցանցի (Փոխցանց) անդամների շրջանում՝ իրավիճակի համատեքստը համապետական և տեղական մակարդակներում ներառելու և տեղերում առկա միտումներն արտացոլելու նպատակով: Մշտադիտարկման խումբը ուսումնասիրել է նաև հանրային իրազեկվածության բարձրացման քարոզարշավի իրականացման վերաբերյալ Ծրագրի գործընկերների՝ ՍԴՀ-ի, ԱԶԿ-ի և ՄԿՀԽ-ի տրամադրած տեղեկությունները:

Առաջաբան

9. Միջինում Հայաստանում հինգ կանանցից չորսն ամուսնանում են մինչև 24 տարեկանը, ինչն աշխատաշուկայում աշխատանքի փորձ ձեռք բերելու կարճ ժամանակահատված ունենալու միայն ենթադրական հեռանկար է ապահովում նրանց համար: Եվ սա այն դեպքում, երբ նրանց հաջողվում է չհայտնվել երիտասարդ կանանց այն մեծ խմբում, որը բախվում է իր առաջին աշխատանքը գտնելու հարատև դժվարությանը: Ավելին, Հայաստանում կանանց մեկ երրորդից ավելին ընտանիք է կազմում մինչև բարձրագույն կրթություն ստանալը: Այսինքն՝ 21-ից 23 տարեկան հասակում կանայք ունենում են առաջին երեխան և վաղ մանկության տարիքից մինչև դպրոցական կրթության վաղ տարիները կրում երեխայի առօրյա խնամքի բեռը:[1]

10. Խնամքի ծառայությունների սակավության և ֆինանսապես մատչելի ծառայությունների սահմանափակ հասանելիության պայմանները Հայաստանում յուրաքանչյուր երկրորդ մորը ստիպում են ստանձնել «լրիվ դրույքով խնամատարի» պարտականությունը և հիմնականում զբաղվել տնային տնտեսությամբ: Արդյունքում, ժամանակակից ընտանիքը դիմակայում է մի շարք մարտահրավերների և կանայք հարկադրված են դժվարին ընտրություն կատարել երեխայի խնամքի և դաստիարակության իրենց գործառույթների օգտին՝ ամբողջությամբ կամ մասամբ հրաժարվելով աշխատաշուկա մուտք գործելուց:

11. Սա ամենից առաջ բացասաբար է ազդում ծնողների հնարավորությունների վրա՝ կրճատելով ծնելիության մակարդակը, ինչը նպաստում է նաև բնակչության ծերացմանը՝ լրացուցիչ բեռ դառնալով հասարակության այն անդամների համար, ովքեր այսօր մտնում են տնտեսապես ակտիվ տարիք և հարկադրված են լինելու աշխատել ավելի երկար, քան նախորդ սերունդը՝ երկրում ավելի մեծ տոկոս կազմող թոշակառուներին աջակցելու նպատակով: Սրա մասին է վկայում նաև այն, որ գրեթե յուրաքանչյուր երկրորդ հայաստանցի համոզված է, որ անհրաժեշտ թվով երեխա ունենալը հղիության ընդհատման բավարար հիմք է:

12. Երկրորդ. թուլանում են տնային տնտեսության եկամուտներում ավելի քիչ ֆինանսական ներդրում ունեցող կնոջ բանակցային դիրքերը՝ սահմանափակելով նրա ձայնի իրավունքը և մասնակցությունը ներընտանեկան որոշումների կայացման գործընթացում, այդ թվում՝ վերարտադրողական ընտրության իր հնարավորությունները:

13. Երրորդ. մեծանում է տնային տնտեսության ընդհանուր խոցելիությունը, քանի որ տղամարդու և կնոջ միջև կերակրողի և տնային տնտեսությունը վարողի գործառույթների ոչ ճկուն սահմանազատման թյուրըմբռնումն ամբողջ ընտանիքը կախվածության մեջ է դնում մեկ հիմնական վաստակողից, ով միայնակ է դիմագրավում շուկայական տնտեսության վերելքները և անկումները:

14. Չորրորդ. տնային տնտեսուհու սահմանված դերը հստակ կատարող կանայք մեծ տարիքում հայտնվում են խոցելի վիճակում, ինչը պայմանավորված է կյանքի սպասվող տևողության տարբերությամբ, որի հետևանքով նրանցից շատերը մնում են առանց զուգընկերոջ՝ սահմանափակ կենսաթոշակի հեռանկարով:

15. Հինգերորդ. միկ հիմնական կերակրողի մոդելի խոցելիությունների հետևանքով լրացուցիչ ռիսկ է առաջանում ամբողջ հասարակության համար, ինչը պայմանավորված է զբաղվածությունը կորցնելու դեպքում տնային տնտեսության աղքատացման ավելի մեծ ռիսկով, ինչ հետևանքով մեծանում են նպաստներին ու թոշակներին ուղղվող հանրային միջոցները և ավելանում աղքատության բացասական ազդեցությունը մեղմելուն ուղղված սոցիալական ծրագրերը, մինչդեռ աղքատության խնդիրը հնարավոր էր շատ ավելի արդյունավետ կարգավորել, եթե ընտանիքն ունենար մեկից ավելի հիմնական կերակրող:

16. Հաշվի առնելով գենդերային դերերի խիստ սահմանումը, որը կնոջն է վերապահում մասնավոր-ընտանեկան, իսկ տղամարդուն՝ հանրային-տնտեսական ոլորտի պատասխանատվությունը և

[1] Ցուցանիշները մեջբերված են ՄԱԲՀ-ի «Տղամարդիկ և գենդերային հավասարության հիմնախնդիրը Հայաստանում» զեկույցից, Երևան 2016

դրան ավելացող սեփական բարեկեցության և երեխաների կարիքները հոգալու հարցում տնային տնտեսությունների աճող պահանջները՝ զարմանալի չէր, որ պտղի սեռը հղիության վաղ շրջանում մեծ ճշտությամբ որոշելու հնարավորություն տվող նոր տեխնոլոգիաների հասանելիության և մատչելիության բարձրացումը և ընտանիքի պլանավորումը հանգեցրեցին երեխայի սեռի խտրական ընտրության երևույթի տարածմանը: Հատկանշական է, որ երբ 2011 թվականին ՄԱԲՀ-ն ահազանգեց նախածննդյան փուլում սեռի ընտրության խնդրի մասին, որի հետևանքով Հայաստանում ամեն տարի չէր ծնվում շուրջ 2000 աղջիկ, շատերը, այդ թվում՝ ոլորտի մասնագետները սա անհավատալի համարեցին:

17. Սեռի խտրական ընտրության երևույթի առկայության փաստն ընդունելուց հետո, ՀՀ կառավարությունը շահագրգիռ հիմնական կառույցների հետ համատեղ, 2013-2016 թվականներին նախաձեռնեց ծրագրեր, որոնք ուղղված էին միջգերատեսչական համագործակցություն պահանջող համապարփակ միջոցառումների միջոցով նախածննդյան փուլում սեռի խտրական ընտրության երևույթի կանխարգելմանը: Քաղաքականության մշտադիտարկման սույն ուսումնասիրությունը փորձում է գնահատել այդ ջանքերի ազդեցությունը: Այդ գնահատականը հիմնված է ՄԱԲՀ-ի նախածննդյան փուլում սեռի ընտրության 2011թ. հետազոտության և ՄԶՄԿ-ի 2017թ. նույն մեթոդով իրականացված հետազոտության արդյունքների վրա: Այն ապացուցողական հիմնավորման ամուր հիմք է ստեղծում և կարող է ծառայել մի շարք նպատակների, այդ թվում՝ (ա) վերջին 6 տարվա ընթացքում տեղի ունեցած փոփոխությունների գնահատմանը և դրանց հնարավոր պատճառների վերհանմանը, (բ) այս ոլորտում երբևէ իրականացված խոշորագույն իրազեկման քարոզարշավի և հասարակության հետ հաղորդակցության արդյունքում ձևավորված քաղաքականության մշակմանն ու ընդունմանն ուղղված ջանքերի արդյունավետության գնահատմանը, (գ) նորածինների սեռերի համամասնության վերականգնման միտումը պահպանելու նպատակով առանձին ոլորտներում շարունակաբար առկա մարտահրավերների գնահատմանը և քաղաքականության պատասխանատուների կողմից դրանց արձագանքման ուղիներին:

Ամփոփագիր

18. Տղաների նկատմամբ նախապատվությունը և պտղի սեռը հղիության վաղ շրջանում որոշելու հնարավորություն ընձեռող տեխնոլոգիաների հասանելիության ու մատչելիության աստիճանական ավելացումը, հնարավորություն են տալիս մարդուն միջամտել նորածինների սեռերի բնական հավասարակշռությանը: Հայաստանում իրավիճակն հատկապես սրվեց 1990-ականների սկզբին, երբ գրանցվեց ծնելիության 2.62 ցուցանիշի կտրուկ անկում, որը 2010թ. հասավ 1.56: Այսպես, եթե նորածինների սեռերի բնական համամասնությունը (տղա/աղջիկ) 1.02-1.07 միջակայքում է, ապա Հայաստանում այն նշանակալիորեն շեղված է, ինչը վկայում է, որ ընտանիքի պլանավորման ընթացքում հղիությունը պահպանելու կամ ընդհատելու վերաբերյալ որոշումը պայմանավորող փոփոխականների շարքում ընդգրկվել է նաև պտղի սեռը:

19. Քաղաքականության երկխոսության ծավալման և զարգացման գործընկերների ու քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համատեղ ջանքերի արդյունքում ՀՀ կառավարությունը 2014թ. վերջին ընդունեց իր առաջին որոշումը՝ նախածննդյան փուլում պտղի սեռի ընտրությունը և պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումը կանխարգելելու նպատակով միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտության մասին: Արդեն 2015 թվականին ընդունվեց «Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների 2015-2017 թվականների կանխարգելման ծրագիրը», որի իրականացմանը մեծապես աջակցեց Եվրոպական Միության ֆինանսավորումը և որի իրականացմանը համատեղ ջանքերով լծվեցին քաղաքացիական հասարակության առանցքային մի շարք դերակատարներ՝ ՄԶՄԿ-ն, «Սթիթչինգ Սեյվ դը Չիլդրեն Նեդերլանդս» և «Սեյվ դը Չիլդրեն Ինթերնեյշնըլ» կազմակերպությունները, «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ-ն, «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ-ն:

20. Տղա երեխայի նախապատվությունը ճանաչելով որպես երեխայի սեռի խտրական ընտրության հիմնական նախապայմաններից մեկը, կարևորելով աղջիկների և կանանց թերարժևորման կանխարգելումը՝ որպես հասարակությունը նոր սոցիալական իրողություն ուղղորդող քայլ, վերը նշված կազմակերպությունները ԵՄ ֆինանսական աջակցությամբ և ՄԶՄԿ-ի ղեկավարությամբ, ինչպես նաև առանցքային այլ դերակատարների հետ համագործակցությամբ և տեղական աջակցության ցանցերի ներգրավմամբ նախաձեռնեցին ծրագրի իրականացումը: Հիմնական թիրախ ընտրվեց հենց տղա երեխայի նախապատվության և աղջկա թերարժևորման հիմքում ընկած ընկալումների վերասահմանումը, քանի որ նոր տեխնոլոգիաների հետագա զարգացումը ուղղորդելը կամ ծնելիության մակարդակի նշանակալի փոփոխությունների վրա ներգործությունը միջնաժամկետ հատվածում նվազ իրատեսական կամ նպատակահարմար են:

21. Ծրագրի շրջանակում մշակված հաջողված ձևաչափերից մեկը ՄԶՄԿ-ի ձևավորած «Տեղական մասնակցության և ոչխտրականության» փորձի և գիտելիքի փոխանակման ցանցն է, որը նախածննդյան փուլում սեռի ընտրության խնդրում հավաքական աջակցության հարթակ է, ուր ընդգրկված են նախածննդյան փուլում սեռի ընտրության կանխարգելմանը, աղջիկների արժևորմանն ուղղված քարոզչության գործիքներ մշակելու և կիրառելու գործին լծված ավելի քան 400 մասնագետ: Այդ ջանքերի արդյունքում, մասնավորապես, ծրագրի գործընկեր «Սեյվ դը Չիլդրեն Ինթերնեյշնըլ» կազմակերպության անմիջական աջակցությամբ փոքր դրամաշնորհների ծրագրերով տեղերում պատրաստվել և բեմադրվել են թատերական և տիկնիկային ներկայացումներ, պատրաստվել և հեռարձակվել են կարճամետրաժ ֆիլմեր, սոցիալական գովազդներ, հեռուստատեսային և ռադիո հաղորդումներ, կազմակերպվել են լուսանկարչական ցուցահանդեսներ, «ֆլեշ մոբեր», հրապարակվել են հոդվածներ և քարոզչական ու լրատվական այլ նյութեր, որոնք ուղղված են եղել այսպես կոչված «բազմակարծիք տգիտության» (pluralistic ignorance) հաղթահարմանը և անձանց ու ամուսնական զույգերի շուրջ կարծիք ձևավորողների միջավայրում այն կարծրատիպային ընկալումների ու համոզմունքների կոտրելուն, որոնք սնում են տղա երեխայի հանդեպ անհիմն նախապատվությունն ու ակնկալիքները:

22. Սեռով պայմանավորված արհեստական ընդհատումների տարածվածության և պատճառների 2017թ. հրապարակված հետազոտությունը, որում մեծապես օգտագործվել է 2011թ. հետազոտության մեթոդաբանությունը, անդրադարձել է Հայաստանում նախածննդյան փուլում սեռի ընտրության միտումներին:[2] Զեկույցի նպատակն էր վերլուծել երևույթի տարածվածությունն ու պատճառները, ինչպես նաև վերհանել վերջին տարիների պետական քաղաքականության և ծրագրերի արդյունքում տեղի ունեցած բարելավումները, եթե այդպիսիք եղել են: Սեռերի համամասնությունների պաշտոնական վիճակագրությունը վկայում է նման բարելավման մասին:

23. 2017 թվականի տվյալները փաստում են, որ երրորդ հղիության ընթացքում միջամտական վարքագիծն ի հայտ է գալիս 1.2 գործակցով: Սա ոչ միայն նախածննդյան փուլում սեռի ընտրության խնդիր է, այլև բեկման կետի հստակ ցուցիչ, երբ վերարտադրողականությունը դադարեցնելու նպատակով ընտանիքները սկսում են ինտենսիվ կիրառել ընտանիքի պլանավորումը և կարգավորել ծնելիության մակարդակը: Վերջին խնդիրը դեռևս պետական ծրագրերի ու քաղաքականության և զարգացման գործընկերների անմիջական ջանքերի շրջանակից դուրս է մնացել:

24. Սույն հետազոտությունը համեմատել է նախածննդյան փուլում սեռի ընտրության արմատական պատճառների երկու վերլուծությունները (2011 և 2017 թվականներ)՝ փորձ անելով վերհանել փոփոխությունների հիմքում ընկած հնարավոր պատճառները և դրանց վերագրելիությունը քաղաքականության գործողություններին և/կամ անգործությանը: Նշված ժամանակահատվածում ընտանիքների եկամուտներն ավելի մեծ կախվածության մեջ են հայտնվել կենսաթոշակներից ու նպաստներից: 2017թ. հարցվածների 17 տոկոսը ներկայացրել է մինչև 50 000 դրամ ամսական եկամուտ՝ 2011թ. 9 տոկոսի համեմատ: Մինչև 100 000 դրամ ամսական եկամուտ ունեցողների տոկոսը 2011թ. 34-ից՝ 2017թ. նվազել է մինչև 24 տոկոս:

25. Խորանում է նաև անհավասարությունը: Մի կողմից ավելի մեծ թիվ են կազմում այն հարցվածները, որոնք կորցրել էին իրենց նախկին վաստակը, մյուս կողմից ավելի շատ են տնային տնտեսությունները, որոնց եկամուտներն աճել են: Սա, թերևս, կարող է վկայել նաև վատթարացող պետական սոցիալական ապահովության համակարգի, դրա հետևանքով սոցիալական արդարությանն ուղղված պետական քաղաքականության և հարստության համահավասար բաշխման մասին:

26. Անձնական եկամուտների դիտանկյունից, կանայք մասնակցություն են ունենում տնային տնտեսության համախառն եկամտի ձևավորմանը և այդ պատճառով որոշակի առումով ձեռք են բերում ներընտանեկան որոշումների կայացման հարցում բանակցային նոր հնարավորություններ: Այս տեսանկյունից կարևոր է դիտարկել զբաղվածության և եկամուտների դինամիկան այն առումով, թե որքանով այն կարող էր ազդել կանանց ձայնի և գործելու հնարավորությունների վրա: Նման վերլուծությունը կարևորվում է այն առումով, որ եկամտի ապահովման դերակատարումները կարող են ազդեցություն ունենալ նաև վերարտադրողական, այդ թվում՝ հղիությունն ընդհատելու վերաբերյալ որոշում կայացնելու հարցում: Այսպես, աճել է այն հարցվածների թիվը, որոնց պնդմամբ տնային աշխատանքն իրենց հիմնական զբաղմունքն է: Ի տարբերություն 2011 թվականի, երբ հարցվածների միայն 40 տոկոսն էր նշել, որ եկամուտ չունեցող տնային տնտեսուհի են, այսօր այդ թիվը հասել է 68 տոկոսի: Հատկանշական է, որ նրանք չեն համարում իրենց գործազուրկ, ինչը 2017թ. հարցաշարում պատասխանի հնարավոր տարբերակ էր:

[2] Հղիության սելեկտիվ արհեստական ընդհատումների պատճառներն ու ծածկույթը Հայաստանում, ՄԱԲՀ, Երևան 2016:

27. Ներկայում, 2011թ. համեմատությամբ, ավելի մեծ թիվ են կազմում եկամուտ չունեցող կանայք: Սա համահունչ է տնային տնտեսուհի լինելու իրենց պատասխանին, ինչն ավելին է, քան գործազրկությունը և վկայում է վատթարացող մշակութային նորմերի մասին, երբ կնոջից առաջին հերթին ընտանիքն ու հասարակությունն ակնկալում են երեխաների դաստիարակողի գործառույթի իրականացումը՝ ի տարբերություն տղամարդու, ում վերապահվում է հիմնական վաստակողի և կերակրողի դերը:

28. 2017թ. զեկույցում նշվում է, որ հարցվածների 71.2 տոկոսը որպես հիմնական վաստակող նշել են ամուսիններին: Մյուս կողմից, 10 տոկոսային կետով ավելացել է 30 000-50 000 դրամ ամսական եկամուտ ունեցող կանանց թիվը: Հաշվի առնելով 9-ամյա դպրոցը որպես կրթության բարձրագույն մակարդակ նշող հարցվածների և իրենց տնային տնտեսուհի ներկայացնողների թվի աճը՝ տնտեսական հնարավորություններ ընձեռող ծրագրերը չեն կարող բերել դրական արդյունքներ, քանի դեռ չի հաղթահարվել կնոջ զբաղվածությունը երեխայի խնամքի ու տնային աշխատանքի նկատմամբ երկրորդային համարելու խորացող նորմը:

29. Կանայք, ովքեր իրենց համարում են իրենց տնային տնտեսության կերակրողը կամ հիմնական վաստակողը, ունեն որոշումներ կայացնելու զգալի լիազորություններ: Հարցը տրվել է այն կանանց, ովքեր նշել են եկամուտ ունենալու փաստը: Շատ բացառիկ դեպքերում են միայն աշխատող կանայք նշում, որ իրենց ամուսիններն են միանձնյա որոշում կայացնողները: Ի տարբերություն աշխատող կանանց՝ այն դեպքերում, երբ կինը եկամուտ չի վաստակում, վտանգվում է նրա մասնակցությունը տնային տնտեսության որոշումների կայացմանը: Միջուկային (նուկլեար) ընտանիքներում եկամուտ չձևավորող կանայք սովորաբար զուրկ են ընտանիքի ներսում սեփական ձայնի իրավունքից: Եթե գյուղական նուկլեար ընտանիքների մեծ մասում կանայք ամսական վաստակեին մինչև 50 000 դրամ, նրանք հնարավորություն կունենային ապահովել տնային տնտեսության համախառն եկամտի 25-ից 50 տոկոսը, ինչը կուժեղացներ իրենց դիրքերը ընտանիքի ներսում որոշումների կայացման տեսանկյունից:

30. Զբաղվածությունը և խնամքը կանգնեցնում է կնոջը մի խաչմերուկի առջև, ստիպելով նրան դժվարին ընտրություն կատարել աշխատաշուկան լքելու, հղիությունը հետաձգելու կամ հղիությունների թիվը սահմանափակելու միջև: Բնականաբար, սա պտղի սեռով պայմանավորված խտրական պլանավորման կարևոր գործոններից մեկն է, ինչը մեծացնում է նորածինների սեռերի խախտված համամասնությունը: 2011թ. հետազոտության ընտրանքի համեմատ, 2017 թվականին՝ բացառությամբ կենդանածնությամբ ավարտվող առաջին և երկրորդ հղիությունների, կենդանածնությամբ հղիությունների թիվը նվազել է:

31. Աշխատող կանանց մեծ մասը նշել է, որ իրենց երեխաների խնամքն ապահովել են ընտանիքները (հետազոտությանը մասնակցած յուրաքանչյուր 100 աշխատող կնոջից 41-ը նշել է, որ երեխաներին խնամել է ընտանիքի անդամներից մեկը): Անձամբ երեխաների խնամքն ապահովելու փաստը նշել են 100 հարցված կանանց գրեթե կեսը՝ շուրջ 49-ը: Սա նշանակում է, որ հանուն երեխաների խնամքի նրանք առնվազն 3 տարով հրաժարվել են զբաղվածությունից: Ի տարբերություն մանկական խնամքի վաղ տարիների՝ 3-ից 6 տարեկան երեխաներ ունեցող աշխատող կանայք, բացի ինքնուրույն խնամելուց կամ ընտանիքի այլ անդամների աջակցությունից, ունեն ընտրության ավելի շատ տարբերակներ: Այդուհանդերձ, յուրաքանչյուր հինգերորդ աշխատող մայրը նախընտրում է խնամել երեխային մինչև 6 տարեկան հասակը՝ լրջորեն վտանգելով զբաղվածության իր հեռանկարները կամ ստիպված լինելով աշխատել կես դրույքով:

32. Նույնիսկ երեխաների տարրական դպրոց հաճախելուց հետո, հատկապես առաջին տարիներին, երեխաների խնամքը շարունակում է մնալ այն գործառույթը, որը պահանջում է ինստիտուցիոնալ լուծում՝ ընտանիքների և, մասնավորապես, աշխատող կանանց բեռը թեթևացնելու համար: Աշխատող կանանց գրեթե կեսը նշել է, որ իրենց երեխաների խնամքն ապահովել են ընտանիքի անդամները, իսկ մյուս կեսն իրենց է նշել որպես հիմնական խնամատար: Վաղ տարիքի երեխաների համար խնամքի հաստատությունների և ծառայությունների բացակայությունը, որին

գումարվում են ծնողների գենդերային դերերի սահմանափակումները, ծանր բեռ է դնում կնոջ ուսերին, նախևառաջ վտանգելով նրա հեռանկարներն աշխատաշուկայում:

33. Զգալիորեն նվազել է տղաներին տրվող նախապատվությունը, որին փոխարինում է ապագա երեխայի հարցում սեռերից որևէ մեկին առավելություն չտալու մոտեցումը: Ի տարբերություն 2011 թվականի, երբ 59.3 տոկոսը հստակ դիրքորոշում էր հայտնել, թե միջավայրը (այսինքն՝ հղման ցանցը)[3] նախապատվությունը տալիս է տղա երեխային, ապա 2017թ. այս ցուցանիշը նվազել է մինչև 36.7 տոկոս: Անմիջապես ընտանիքում տղա երեխայի նախապատվության առկայության մասին նշել է հարցվածների միայն 12.9 տոկոսը՝ 2011 թվականի 45.3 տոկոսի համեմատ:

34. Կանանց ֆինանսական դերակատարման բարելավումը և նրանց զբաղվածության հնարավորությունների ընդլայնումը կձևավորեն իրավիճակ, երբ նրանք զգալի ազդեցություն կունենան նախապատվության միտումների վրա: Սա, իհարկե, արդյունք չի ունենա, եթե աղջիկներին թերարժևորող կարծրատիպերի տարալուծմանն ուղղված քարոզարշավներին զուգահեռ կանանց չընձեռնվի ֆինանսական դիրքը բարելավելու միջոցով իրենց ձայնի իրավունքից օգտվելու ավելի լայն իրական հնարավորություններ:

35. Երբ դիտարկվում են սեռի ընտրության նախապատվությունը և անձնական եկամուտը կամ ըստ ոլորտների զբաղվածության տեսակները, կանայք ավելի մեծ նախապատվություն են տալիս տղա երեխային, ինչը հուշում է, որ միայն անձնական եկամտի աճը կամ կրթական մակարդակի բարձրացումը չեն կարող լուծել խնդիրը: Խնդրի արմատներն ավելի խորն են: Դրանք պայմանավորված են յուրաքանչյուր անհատի վարքագիծը ձևավորող ու սահմանող սոցիալական նորմերով՝ անկախ նրա սեռից, կրթության մակարդակից և/կամ բնակավայրից:

36. 2011 և 2017 թվականների ֆոկուս խմբերը վերհանել են քաղաքային բնակավայրերում վերջին հինգ տարիներին ճնշումների թուլացման միտում, ինչն այդքան էլ ակնհայտ չէ գյուղական բնակավայրերի դեպքում: Այդուհանդերձ, հատկապես Արցախյան հակամարտության շփման գծում վերջին զինված ընդհարումները և երիտասարդների շրջանում կորուստները վերահաստատել են տղամարդկանց կարևորությունը: Այս հանգամանքը և արտագաղթը խթանել են ավելի շատ տղաներ ծնելու կարևորությունը՝ երկրում հավասարակշռությունը պահպանելու համար:

37. 2017թ. հետազոտության եզրակացություններից մեկը նշում է, որ աղջիկ երեխայի ծնունդը հաճախ կապվում է հոգսերի, իսկ տղայինը՝ ուրախության հետ: Սա վկայում է այն մասին, որ շարունակում են շրջանառվել տղա երեխայի նախապատվության հարցում 2011 թվականին արձանագրած մոտեցումները: Ի տարբերություն տղա երեխային տրվող նախապատվությանը, թե՛ 2011 և թե՛ 2017 թվականին աղջկա նախապատվության ցածր ցուցանիշը թերևս պայմանավորված է բացասական հետևանքներից խուսափելու հանգամանքով: Տպավորություն է ստեղծվում, որ նախապատվության ամբողջ համակարգը հիմնված է հետևյալ գաղափարների վրա. «ինչ լավ է տղա ունենալը» և «ինչ վատ կլինի, եթե մարդ աղջիկ ունենա» (կամ տղա չունենա): Եթե աղջիկ երեխայի հետ կապված բացասական նախապատվություններն ամբողջությամբ չտարալուծվեն՝ նախապատվությունը սնուցող գաղափարների համապարփակ վերաձևակերպման միջոցով, ապա որևէ միջամտություն մնայուն արդյունք ձևավորել ի զորու չէ և ցանկացած լուրջ ցնցում կարող է կարճ ժամանակահատվածում ամեն բան վերադարձնել «ի արատավոր շրջանս յուր», քանի որ միայն ընտանիքում և միջավայրում ճնշումներ թուլացնելը, ինչը համատեքստի տեսանկյունից անհրաժեշտ է, բավարար չէ հայեցակարգային փոփոխության համար:

38. Նախորդ վեց տարիների ընթացքում հանրային կարծիքը տղա երեխայի նախապատվության վերաբերյալ ակնհայտորեն փոխվել է. այն ինչ համարվում էր բավականին նորմալ և ընդունելի այժմ սկսում է ընկալվել որպես անցանկալի: 2017թ. արդյունքները և սեռի հարցում նախապատվություն չունեցող հարցվածների թվի աճը վկայում են սոցիալապես ընդունելի

[3] Հղման ցանց (reference network) այն անձանց համախումբն է, որը տվյալ հարցվողի համար որոշակի հեղինակություն ունի և այդ ցանցում առկա անձանց ակնկալիքներն ու սպասումները նախասահմանում են հարցվողի վարքագիծն ու ընտրությունը:

շեղվածության (social desirability bias) շրջադարձի մասին: Ավելին, եթե տղա երեխայի նախապատվության շուրջ «հավաքական տգիտությունը» (pluralistic ignorance) մղում էր անհատներին դրսևորել իրենց մերձավոր և ազդեցիկ շրջապատի համար ընկալելի վարքագիծ, ապա ներկայում անհատներն իրենց որոշումները կայացնում են համեմատաբար ավելի բարենպաստ պայմաններում, որոնք նվազ ճնշող են, հետևաբար, ընտրության ավելի մեծ հնարավորություն են ընձեռում սոցիալական նորմերի ազդեցության թուլացման պայմաններում:

39. Այդուհանդերձ, սոցիալական նորմեր փոփոխելու և ստեղծված հնարավորությունները լիարժեքորեն օգտագործելու համար անհրաժեշտ է վերանայել աղջիկ երեխայի ընկալումը, որի ծնունդը դեռևս դիտվում է որպես «պարտություն»: Փոխարենը, հարկ է աղջիկ երեխային կապակցել հաղթողի կերպարի հետ՝ ճիշտ այնպես, ինչպես տղայի կերպարն է փոխկապակցվում հաղթանակի և, ամենակարևորը, վաստակողի կերպարի հետ: Հետևաբար, կարևոր է լուծել աղջիկների մեկնարկային հնարավորությունների ու դերի բարելավման խնդիրը, որպեսզի նրանք ավելի մեծ աջակցություն ապահովեն իրենց և ընտանիքներին: Սա անմիջականորեն առաջ է բերում ենթադրություն (որը ապացույցների միջոցով հաստատում է վերլուծությունը), որ ծննդաբերողի և կերակրողի գործառույթներն ապահով համադրելու համատեքստում արդեն իսկ աշխատող կանանց աջակցելու և աշխատաշուկա նոր մուտք գործողներին օգնելու դեպքում նրանց համար կստեղծվեն տնտեսական ավելի մեծ հնարավորություններ՝ (ա) մասնակցելու տնային տնտեսության եկամուտի ձևավորմանը և (բ) ներընտանեկան որոշումների կայացման ոլորտում ավելի հզոր բանակցային դիրքեր ունենալուն:

40. Որպեսզի նման փոխակերպումը տեղի չունենա վերարտադրողական որոշումներում կնոջ ընտրության հնարավորությունները սահմանափակելու հաշվին, ինչը մինչ օրս խնդիր չի եղել, բայց կարող է դառնալ այդպիսին հաջորդ սերնդի համար, կամ տնտեսապես ակտիվ մնալու նպատակով երրորդ հղիությունից հետո վերարտադրողական ընտրությունը գրեթե վերացնելու հաշվին, ինչը մեծապես կնվազեցնի ծնելիության մակարդակը և կխթանի նախածննդյան փուլում սեռի ընտրությունն ի նպաստ տղա երեխաների, մեծապես կարևորվում է կնոջ խնամքի գործառույթներն ու վաստակողի դերերի արդյունավետ համադրումը: Սա, առաջին հերթին, հնարավոր է երեխայի ծնունդից մինչև դպրոցի առաջին տարիներն ընդգրկող խնամքի տարատեսակ ծառայություններ ապահովելու միջոցով: Կարևոր է նաև ազատել աշխատող կանանց կրկնակի բեռից՝ թեթևացնելով նրանց ծնողական պարտականությունները և երեխայի խնամքի գործում ավելի լայն ընդգրկելով, մասնավորապես, հայրերին: Երեխայի դաստիարակության հարցում գենդերային դերերի ավելի մեծ ճկունության և կնոջը վաստակողի ավելի ընդլայնված դեր վերապահելու դեպքում, կանանց անվտանգության զգացումն աստիճանաբար բարձրանում է՝ դրականորեն ազդելով որոշումների և ընտրության առաձգականության վրա:

Նախապատմություն

41. Տղա երեխայի հետևողական նախապատվությունը, որը համադրվում է պտղի սեռը նախապես նույնականացնելու հնարավորություն ընձեռող բժշկական տեխնոլոգիաների հասանելիության ու մատչելիության հետ, հնարավորություն են տվել մարդուն միջամտել նորածինների սեռերի բնական հավասարակշռությանը: Հայաստանում իրավիճակը սրել է 1990-ականների սկզբին գրանցված ծնելիության 2.62 ցուցանիշի կտրուկ անկումը, որը 2010թ. հասավ 1.56 (աննշան բարելավում եղավ 2015թ., երբ միջին համապետական ցուցանիշը կազմեց 1.6):

42. Սակայն մինչև 2011 թվականը նախածննդյան փուլում սեռի ընտրությունը հիմնականում դուրս էր մնացել քաղաքականություն մշակողների ուշադրությունից, երբ ՄԱԲՀ-ն ահազանգեց նախածննդյան փուլում սեռի ընտրության մասին:[4] Եթե պահպանվեր բնական ընտրությունը, ապա համամասնությունը կհավասարակշռվեր 1.02-1.07 միջակայքում, մինչդեռ Հայաստանում այն ունի շեղման հստակ նշաններ, ինչը վկայում է, որ ընտանիքի պլանավորման ընթացքում հերթական հղիությունը պահպանելու կամ ընդհատելու վերաբերյալ որոշումը պայմանավորող փոփոխականների շարքում ընդգրկվել է նաև պտղի սեռը: Ավելի՛ն, քաղաքային բնակավայրերում, որտեղ, ի տարբերություն գյուղական բնակավայրերի (2.0), ծնելիության ցուցանիշը 2010թ. տատանվել է 1.3-ի շուրջ, ընտանիքները նախածննդյան փուլում կատարել են սեռի ընտրություն երրորդ հղիության ընթացքում, իսկ աննախադեպ գագաթնակետը եղել է չորրորդ հղիության ժամանակ (*Գծապատկեր 1*): Այսպես, չորրորդ հղիության արդյունքում 100 աղջկա հաշվով ծնվել է 327 տղա: ՄԱԲՀ-ի զեկույցից և հանրապետական մարդահամարի արդյունքներից ելնելով ակնհայտ դարձավ, որ 1996 թվականից տղա-աղջիկ հարաբերակցությունը միջինում կազմել է 115, ինչը հանգեցրել է նրան, որ մինչև 15 տարեկանների խմբում աղջիկների թիվը 39 000-ով պակաս է տղաների թվից:[5] ՄԱԲՀ-ի հաշվարկները հուշում են, որ եթե նման միտումը շարունակվեր Հայաստանը մինչև 2060 թվականը կկորցներ 93 000 կին:

Գծապատկեր 1. Նորածինների սեռի համամասնությունը Հայաստանում՝ ըստ համայնքի տեսակի



43. ՄԱԲՀ-ի 2011թ. զեկույցին հաջորդած երեք տարվա ընթացքում Հայաստանում սոցիալական և առողջապահության ոլորտներում քաղաքականության հիմնական պատասխանատուներն ու մյուս շահագրգիռ դերակատարները թերահավատորեն էին վերաբերվում այն փաստին, որ Հայաստանը պտղի սեռի ընտրության տեսանկյունից աշխարհում առավել մեծ խնդիր ունեցող

[4] «Սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների տարածվածությունն ու պատճառները Հայաստանում», ՄԱԲՀ, Երևան 2011

[5] «Նորածինների սեռերի անհամամասնությունը Հայաստանում. տեղեկատվական գրքույկ» ՄԱԲՀ, Երևան 2013

երեք պետություններից մեկն է:[6] Սակայն քաղաքական երկխոսության ծավալման և զարգացման գործընկերների ու քաղաքացիական հասարակության մի շարք կազմակերպությունների կողմից խնդրի հետևողական բարձրաձայնման և խնդիրը քաղաքական իշխանության համար նշանակալի հարթության մեջ ներկայացնելու արդյունքում, ՀՀ կառավարությունը 2014թ. վերջում ընդունեց առաջին որոշումը նախածննդյան փուլում պտղի սեռի խտրական ընտրությունը և պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումը կանխարգելելու նպատակով միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտության վերաբերյալ: Արդեն 2015 թվականին ընդունվեց «Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների 2015-2017 թվականների կանխարգելման ծրագիրը», որի իրականացումն ապահովվեցին ԵՄ ֆինանսական աջակցությունը և ՄԶՄԿ, «Սթիթչինգ Սեյվ դը Չիլդրեն Նեդերլանդս» և «Սեյվ դը Չիլդրեն Ինթերնեյշնալ» կազմակերպությունների, «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ, «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ համատեղ ջանքերը:

44. Ծրագրի հիմնական բաղադրիչները նախատեսում էին մշակել սեռի ընտրությանն առնչվող վերլուծական գործիքներ, բնակչության հետ իրազեկման աշխատանքներ իրականացնել խնդրի վերաբերյալ, նախածննդյան փուլում սեռի ընտրությունը կանխարգելելու նպատակով զարգացնել բժշկական անձնակազմի, սոցիալական աշխատողների և կրթության ոլորտի մասնագետների կարողությունները, ինչպես նաև ձևավորել աղջիկ երեխային արժևորող ընկալումներ: Նախատեսված էին բազմաթիվ միջոցառումներ համայնքային, մարզային և հանրապետական մակարդակներում: Ստեղծված բազմաթիվ գործիքներն ու աշխատանքի մեթոդները, աստիճանաբար ընդլայնելով հաղորդակցման փոխցանցը, ի մի բերեցին խնդրի հրատապության նույն ընկալումն ու գիտակցումը կիսող և համապատասխան գործիքակազմին տիրապետող մասնագետներին՝ ձևավորելով շահագրգիռ կողմերի աջակցության խոշորագույն մի ցանց, որը երկու տարի շարունակ քարոզչությամբ փորձում էր փոխել մոտեցումները, ընկալումներն ու վարքագիծը՝ նպատակ ունենալով արմատապես փոխակերպել տղա երեխայի նախապատվության սոցիալական նորմը:

45. Մեկ տարի անց փոփոխություններ կատարվեցին «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքում՝ արգելելով պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումը հղիության երկրորդ եռամսյակում: Բացի դրանից, մի շարք դեղամիջոցներ, որոնք նախկինում օգտագործվում էին արհեստական ընդհատման համար և ազատ վաճառքում էին, ներառվեցին բացառապես դեղատոմսով բաց թողնվող դեղերի ցանկում: Միաժամանակ, մասնագետների կարծիքով սեռի ընտրության խնդիրը բժշկական անձնակազմի ուսերին թողնելը կարող է թերևս միայն կարճաժամկետ արդյունքներ ունենալ, իսկ երկարատև հատվածում անգամ ստեղծել կանխատեսելի ռիսկեր, եթե լիարժեքորեն չթիրախավորվեն նախածննդյան փուլում սեռի ընտրության արմատական պատճառները:

46. Տղա երեխայի նախապատվության կանխարգելումն ու աղջիկ երեխայի արժևորումը դրվեց առանցքային գործընկերների հետ համագործակցությամբ և աջակցության ցանցի միջոցով ԵՄ ֆինանսավորմամբ և ՄԶՄԿ ընդհանուր ղեկավարությամբ իրականացվող ծրագրի առանցքում: Կարևորվեց նախապատվության հիմքում ընկած տրամաբանության վերասահմանումը՝ աղջիկների արժևորման նպատակով: Այս առումով դրական է, որ ԱՄՆ «Վորլդ Վիժըն» կազմակերպության ֆինանսավորմամբ «Հոգատարություն հանուն հավասարության» 2016-2019 թվականների ծրագիրն աշխատում է դրական ծնողավարման զարգացման ուղղությամբ, և նպատակ ունի փոխելու առկա կարծրատիպերը՝ ձևավորելով միջավայր, ուր երեխաները արժևորվում են հավասարապես: Թեպետ այս աշխատանքը դեռևս չի հասել տղա կամ աղջիկ երեխայի մասին ընկալումների վրա ազդեցություն ունենալու մակարդակին, այն կարող է փոխլրացնել ՄԶՄԿ-ի և զարգացման այլ գործընկերների սկսած գործը: Մեկ այլ աշխատանք, որն ապագայում կփոխլրացնի տղայի նախապատվության գաղափարը վերասահմանելու ընթացիկ ջանքերը, Միավորված ազգերի մանկական հիմնադրամի նախաձեռնած փորձնական

[6] Տե՛ս՝ «Հայաստանի Հանրապետությունում պտղի սեռի խտրական ընտրության և սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման կանխարգելմանն ուղղված պետական քաղաքականության և ծրագրերի մշտադիտարկման զեկույցը», ՄԶՄԿ, Երևան 2016

հետազոտությունն է, որը գնահատում է տղա երեխայի նախապատվության կարծրատիպերը՝ Հայաստանում կանանց և տղամարդկանց անուղղակի զուգորդումների գնահատման, ինչպես նաև պատմությունների միջոցով, որոնք ուղղված են Հայաստանում նախածննդյան փուլում սեռի ընտրությանն առնչվող սեփական կամ այլ ակնկալիքների բացահայտմանը:

47. Տեղական առանձնահատկությունները հաշվի առնող, փաստերի և գիտելիքների վրա հիմնված ուղերձների և հաղորդակցության գործիքների մշակումը քարոզարշավի հարուստ գործիքակազմի մի մասն էին, որը ձևավորվել և օգտագործվել է ԵՄ աջակցությամբ իրականացված ծրագրի տարիներին: Ծրագրի հաջողության մյուս կարևորագույն բաղադրիչը և, ըստ էության, փոխակերպումների ուղղված միջոցառումների միջանկյալ օղակի հիմնական դերակատարը ՄԶՄԿ-ի ձևավորած «Տեղական մասնակցության և ոչխտրականության» փորձի և գիտելիքի փոխանակման ցանցն էր, որն իրենից ներկայացնում է երեխայի սեռի խտրական ընտրության հարցերով հավաքական աջակցության ցանց և ընդգրկում է պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման, սեռի խտրական ընտրության, տղա երեխայի նախապատվության և աղջիկների արժևորմանն առնչվող ընկալումները բարելավելուն ուղղված քարոզչության գործին լծված ավելի քան 400 վերապատրաստված մասնագետների տարբեր ոլորտներում: Այդ ջանքերի արդյունքում, մասնավորապես, ծրագրի գործընկեր «Սեյվ դը Չիլդրեն Ինթերնեյշնալ» կազմակերպության անմիջական աջակցությամբ փոքր դրամաշնորհների ծրագրերով տեղերում պատրաստվել և բեմադրվել են թատերական և տիկնիկային ներկայացումներ, պատրաստվել և հեռարձակվել են կարճամետրաժ ֆիլմեր, սոցիալական գովազդներ, հեռուստատեսային և ռադիո հաղորդումներ, կազմակերպվել են լուսանկարչական ցուցահանդեսներ, «ֆլեշ մոբեր», հրապարակվել են հոդվածներ և քարոզչական ու լրատվական այլ նյութեր, որոնք ուղղված են եղել այսպես կոչված «բազմակարծիք տգիտության» (pluralistic ignorance) հաղթահարմանը և անձանց ու ամուսնական զույգերի շուրջ կարծիք ձևավորողների միջավայրում այն կարծրատիպային ընկալումներ ու համոզմունքների կոտրելուն, որոնք սնում են տղա երեխա անհիմն նախապատվության ու համապատասխան ակնկալիքները: 2013-2016 թվականներին իրականացված միջոցառումների ամբողջական պատկերը մանրամասն ներկայացված է պետական քաղաքականության և ծրագրերի մասին ՄԶՄԿ-ի զեկույցում:[7]

48. Հատկանշական է, որ ծրագրի գործողությունների մշակման հիմքում շարունակաբար դրվել է նախածննդյան փուլում սեռի ընտրության նմանօրինակ խնդիր ունեցող այլ պետություններում առկա քաղաքականության փորձը: Այսպես, մանրակրկիտ ուսումնասիրվել է մի շարք երկրների, այդ թվում՝ Չինաստանի պետական քաղաքականության և մշակված գործիքների օրինակը՝ սոցիալական նորմերի քննարկման տեսական հիմքերի հետ միասին: Հայաստանյան համատեքստի և իրավիճակային վերլուծությունների հետ համադրությամբ՝ միջազգային փորձի վերլուծությունը ծառայել է որպես փաստական հիմք, որը սպասարկել է ծրագրի նախաձեռնությունների մշակման գիտելիքային հենքը: Այն եղել է Հայաստանում շահագրգիռ հիմնական կողմերին ներկայացվող ծրագրային առաջարկների և քաղաքական խորհրդատվության հիմնական ուղղությունների անբաժան մասը:

[7] Տես՝ «Հայաստանի Հանրապետությունում պտղի սեռի խտրական ընտրության և սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման կանխարգելմանն ուղղված պետական քաղաքականության և ծրագրերի մշտադիտարկման զեկույցը», ՄԶՄԿ, Երևան 2016թ.:

Վեց տարվա հետհայաց. հիմնական համեմատություններ և փոփոխություններ

49. Սեռով պայմանավորված արհեստական ընդհատումների տարածվածության և պատճառների 2017թ. հետազոտությունը, որն ըստ էության հետևել է 2011թ. համանման հետազոտության մեթոդաբանությանը, վեր է հանում Հայաստանում նախածննդյան փուլում սեռի ընտրության միտումները:[8] Զեկույցի նպատակն էր վերլուծել երևույթի տարածվածությունն ու պատճառները: Այն հնարավորություն է տալիս նաև վեր հանել վերջին տարիների հանրային քաղաքականության և ծրագրերի արդյունքում արձանագրված փոփոխությունները: Սեռերի համամասնությունների նախնական համեմատությունը (*Գծապատկեր 1*) վկայում է մի շարք նշանակալի դրական փոփոխությունների մասին:

50. Հետաքրքրական է, որ, 2011թ. համեմատ, գյուղական բնակավայրերում 2017 թվականին վատթարացել է սեռերի հարաբերակցության ցուցանիշն առաջին իսկ հղիության ժամանակ: Անհամամասնությունն ավելի է սրվում հետագա հղիությունների պարագայում (1.19, 1.11, 1.42 և 1.31)՝ վկայելով սեռով պայմանավորված խտրական ընտրության մասին: Ի տարբերություն գյուղական բնակավայրերի՝ քաղաքներում դրական փոփոխության նշաններն ակնհայտ են:

51. 2017թ. տվյալները վկայում են, որ երրորդ հղիության ընթացքում միջամտող վարքագիծն ի հայտ է գալիս 1.2 գործակցով: Սա ոչ միայն նախածննդյան փուլում սեռի ընտրության խնդիր է, այլ բեկման կետի ակնհայտ ցուցիչ, երբ վերարտադրողականությունը սահմանափակելու նպատակով ընտանիքները սկսում են ինտենսիվորեն կիրառել ընտանիքի պլանավորում, ինչի արդյունքում ծնելիության մակարդակը նվազում է: Այս խնդիրը պետական ծրագրերի և քաղաքականության ու զարգացման գործընկերների ջանքերի շրջանակից դուրս է մնում: Եթե 2010թ. գյուղական բնակավայրերում ծնելիության ցուցանիշը կազմել է 2.0՝ քաղաքային բնակավայրերի 1.3-ի համեմատ, ապա 2015թ. պատկերը հակառակն է և քաղաքային բնակավայրերում ծնելիության ցուցանիշը կազմել է 1.7՝ գյուղական բնակավայրերի 1.5-ի դիմաց: Իհարկե, սա կարող է ունենալ ծրագրային առանձնահատուկ պատճառներ, օրինակ՝ ավելի լավ թիրախավորվել են քաղաքաբնակ լսարանն ու շահառուները, ինչպես նաև մոտակա քաղաքներին արդեն իսկ սերտորեն փոխկապակցված որոշ գյուղաբնակ տարածքները, ինչը դուրս է թողել հեռավոր և/կամ թույլ կապված և թերի տեղեկացված համայնքները:

52. Սույն հետազոտությունը համադրում է վերը նշված երկու զեկույցները՝ փորձելով վեր հանել փոփոխությունների հիմքում ընկած հնարավոր պատճառները և դրանց վերագրելիությունը քաղաքականության գործողություններին և/կամ անգործությանը: Այս նպատակով համեմատվել են երկու հետազոտությունների ընտրանքները և դրանց մեթոդաբանությունները, որպեսզի բացառվեն հարցվածների տարբերություններով պայմանավորված տվյալների շեղումները: Երկու դեպքում էլ առաջին քայլը եղել է տնային տնտեսությունների պատահական ընտրությունը՝ թիրախավորելով հետազոտության պահին (2011 և 2017 թվականներին) առնվազն մեկ հղիություն ունեցած 15-49 տարեկան կանանց: Տնային տնտեսությունների ընտրանքը 2011 թվականին կազմվել է Ազգային վիճակագրական ծառայության տվյալների շտեմարանի, իսկ 2017 թվականին՝ ՀՀ ընտրողների ռեգիստրի տվյալների հիման վրա: Ընտրանքը չի փոխվել և

[8] Հղիության սելեկտիվ արհեստական ընդհատումների պատճառներն ու ծածկույթը Հայաստանում, ՄԱԲՀ, Երևան 2016:

երկու դեպքում էլ կիրառվել է ստրատիֆիկացված ընտրանք՝ համեմատությունների համար ստեղծելով առողջ հիմք:

53. Տնային տնտեսությունների ընտրությունը և դրանց աշխարհագրական բաշխվածությունը (*Գծապատկեր 2*) երկու հետազոտությունների համեմատությամբ տարբերության որևէ նշան չի պարունակում, որը կարող էր ազդել հարցվողների խմբի վրա: Երկու դեպքում էլ ներկայացվածության շեղումը բոլոր մարզերում չի գերազանցել 1 տոկոսը, բացառությամբ Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերի, որտեղ այն կազմել է 2 տոկոս: Երևանը երկու դեպքում էլ ունեցել է նշանակալի մասնաբաժին՝ ապահովելով տնային տնտեսությունների շուրջ մեկ երրորդը: Սակայն նման նշանակալի ներկայացվածությունն ունի իր հիմնավորումը, քանի որ Երևանն ամենախիտ բնակեցված տարածքն է, որտեղ ապրում է ամբողջ բնակչության մեկ երրորդից ավելին: Մյուս կողմից, այս բնակավայրի կապակցվածության մակարդակը անհամեմատ գերազանցում է մյուս տարածքների կարողությունը, ինչը, հավանաբար, անհավասար պայմաններ է ստեղծում ծառայությունների մատչելիության և կապի միջոցների հասանելիության իմաստով, որոնք կարևոր են քարոզարշավների համար:

Գծապատկեր 2. Հարցման մեջ ընդգրկված տնային տնտեսությունների աշխարհագրական բաշխվածությունը



54. Երկու հետազոտությունների հարցվողների տարիքը մնացել է գրեթե անփոփոխ մեկ բացառությամբ՝ 2011թ. հետազոտության ընտրանքում 45 տարեկանից բարձր կանայք կազմել են 24 տոկոս, իսկ 2017թ. ընտրանքում՝ 13 տոկոս (տես՝ *Գծապատկեր 3*): Հետազոտության ընտրանքի կեսից ավելին 25-ից 40 տարեկաններն են:

Գծապատկեր 3. Երկու հարցումների մասնակիցների տարիքային բաշխվածությունը



55. Սա համապատասխանում է ամուսնության տարիքին, որը հետազոտության համաձայն տեղի է ունենում 19-ից 25 տարեկան հասակում: ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալները հաստատում են այս միտումը: Փաստը հաստատում է նաև ՄԱԲՀ-ի «Տղամարդիկ և գենդերային հավասարության հիմնախնդիրը Հայաստանում» 2016թ. զեկույցը, որտեղ ազգային ներկայացուցչական ընտրանքում ընդգրկված հարցվողներն ունեն ամուսնության և ծննդաբերության տարիքների հետ կապված համադրելի ակնկալիքներ: Գրանցված ամուսնությամբ կանանց միջին տարիքը 2011թ. կազմել է 25 տարեկան, իսկ 2015թ.՝ 26.2 (*Գծապատկեր 4*): Հետևաբար տրամաբանական է, որ հետազոտության հարցվողների ամենամեծ հատվածի միջին տարիքը կհամընկնի կամ շատ մոտ կլինի 25 տարեկանին:

Գծապատկեր 4. Ամուսնության տարիքը



56. Թե՛ 2011, թե՛ 2017 թվականին հարցվածների մեծամասնությունը հետազոտության պահին ամուսնացած է եղել: Մասնավորապես, 2011թ. հարցվածների 89.3 տոկոսը, իսկ 2017թ.՝ 93.2 տոկոսը նշել է, որ պաշտոնապես ամուսնացած է, և հարցվածների միայն 0.5 տոկոսն է նշել, որ համատեղ են բնակվում: Միայնակ մայրերը հարցված բնակչության կազմում 2011թ. կազմել են 0.3 տոկոս, իսկ 2017թ.՝ 0.4 տոկոս, 2011թ. հետազոտության պահին ամուսնալուծված է եղել

հարցված կանանց 4.4 տոկոսը, իսկ 2017թ.՝ 4.8 տոկոսը, այրիները 2011թ. կազմել են 1.8 տոկոս, իսկ 2017թ.՝ 5 տոկոս: Ավելին, հղիությունն անմիջականորեն փոխկապակցված է ամուսնությանը, քանի որ ամուսնության ու հղիության տարիքները հիմնականում համընկնում են: Հարցվողների առաջին հղիությունը գրեթե անմիջապես հաջորդում է ամուսնությանը (*Գծապատկեր 5*): Ծնելիության տարիքային գործակիցները նույնպես հաստատում են, որ 20-ից 30 տարեկան տարիքային միջակայքը՝ կոհորտան, ամենանշանակալին է:

57. Ըստ Ազգային վիճակագրական ծառայության զեկույցի՝ 2010թ. 1000 կնոջ հաշվով կենդանի ծնունդների առավելագույն միջին ցուցանիշը բաժին է ընկնել 20-30 տարիքային խմբին: Նույն տվյալը ներկայացված է նաև 2017 թվականին: Երկու ընտրանքները համեմատելով՝ թե՛ 2011թ., թե՛ 2017թ. հարցված կանանց 76 տոկոսի շրջանում առաջին հղիությունը եղել է 19-ից 25 տարեկանում: Հետազոտությանը մասնակցած ամուսնացած կանայք ապրում էին կամ նուկլեար ընտանիքում, կամ ընդլայնված ընտանիքում, կամ ընտանիքում, որտեղ, բացի ընդլայնված ընտանիքի ազգականներից, նույն հարկի տակ ապրում են նաև այլ անձիք: Սակայն կանանց մեծ մասը կամ նուկլեար (43.7%՝ 2011թ. և 44.3%՝ 2017թ.) կամ ընդլայնված (44.5%՝2011թ. և 39.1%՝ 2017թ.) ընտանիքներից էին:

Գծապատկեր 5. Կնոջ տարիքն առաջին հղիության պահին



58. Հետազոտությունն ունի մի առանձնահատկություն, որն առաջին հայացքից չի համընկնում Հայաստանում հանրակրթության համակարգում ընդգրկվածության մակարդակներին: 2017թ. հարցվածներն ունեին հանրակրթության ավելի ցածր մակարդակ, քան 2011թ. ընտրանքը: Մինչդեռ 2017թ. ընտրանքում միջին մասնագիտական և բարձրագույն կրթական մակարդակներում կանանց ներկայացվածությունն, 2011թ. համեմատ, ավելի բարձր է: Սա նշանակում է, որ 2017թ. ընտրանքում եղել են երկու խմբեր. մեկը թերկրթված էր և դադարեցրել էր ուսումնառությունն ավելի վաղ, քան ակնկալվում էր, իսկ երկրորդն ավելի բարձր կրթություն ուներ, քան ամուսինները: Այս երևույթը թերևս հնարավոր է մեկնաբանել 2011թ. ընտրանքում միայն հիմնական կրթությամբ հարցվածների փոքր թվաքանակով, որն ավելացել էր 2017 թվականին: Այսպես, 2011թ. ընտրանքում հիմնական կրթությամբ կանանց մասնաբաժինն ընդհանուր ընտրանքում կազմում էր 4.3 տոկոս, իսկ 2017թ. այն հասել էր 23.6 տոկոսի (*Գծապատկեր 6*): Հաշվի առնելով այն փաստը, որ հարցումների ընտրանքը կազմելու բոլոր նախորդող քայլերը եղել են բացառապես նույնը, նման փոփոխությունը կարելի է բացատրել այն աղջիկների քանակի աճով, որոնք դպրոցների տարանջատումից հետո չեն ցանկացել շարունակել կրթությունն ավագ դպրոցում, հատկապես այն դեպքերում, երբ ստիպված էին լինելու այդ նպատակով զգալի տարածություն կտրել ծնողական օջախից:

Գծապատկեր 6. Հարցման մասնակիցների կրթական մակարդակը



59. Բարձրագույն կրթությամբ հարցվածների ավելի մեծ թիվը 2017թ. ընտրանքում ակնառու տարբերություններից մյուսն է: Այսպես, ի տարբերություն 2011 թվականի, երբ հարցված կանանց միայն 22.8 տոկոսն ուներ բարձրագույն կրթություն, 2017թ. այդ ցուցանիշն աճել էր և հասել 31.2 տոկոսի: Երկու հետազոտությունների ընտրանքի բնութագրիչների համեմատության մեջ սա միակ զգալի տարբերությունն է, որը կարող էր ազդել հետազոտության արդյունքների վրա: Սակայն այն նաև հուշում է, որ Հայաստանում կանանց կրթության և հավասար հնարավորությունների առումով կարող է լինել մեծացող ճեղքվածք հիմնական դպրոցական կրթության մակարդակում կանգ առածների և կրթությունը բուհական համակարգում շարունակածների միջև:

Տնային տնտեսության եկամուտը և զբաղվածության դինամիկան

60. Տնային տնտեսությունների գրեթե մեկ հինգերորդի ընդհանուր եկամուտը կախված է գյուղատնտեսությունից, որն իր հերթին, դատապարտված է լինել սեզոնային և, ըստ Համաշխարհային Բանկի վերլուծության, ապրանքի ավելացված արժեքի տեսանկյունից բավականին անարդյունավետ է՝ ապրանքների արտադրության համար ծախսվող աշխատաժամերի համեմատ: Ներկայում տնային տնտեսությունների շուրջ մեկ երրորդը եկամուտ է ստանում հանրային հատվածում զբաղվածությունից՝ 2011թ. 26.5 տոկոսի համեմատությամբ (*Գծապատկեր 7*):

Գծապատկեր 7. Տնային տնտեսությունների եկամտի աղբյուրները



61. Զգալիորեն աճել է այն տնային տնտեսությունների թիվը, որոնց եկամուտը կախված է թոշակներից և նպաստներից: Սա կարող է վկայել վատթարացող տնտեսական միջավայրի մասին, որը տնային տնտեսությունների կայուն եկամուտի աղբյուր է դարձնում հանրային հատվածում զբաղվածությունը և թոշակները/նպաստները: 2017թ. հարցվածների 17 տոկոսը նշել է տնային տնտեսության ամսական եկամուտի բացակայությունը կամ մինչև 50 000 դրամ եկամուտը, երբ 2011թ. ցուցանիշը եղել է 9 տոկոս: Մինչև 100 000 դրամ ամսական եկամուտ ունեցողների մասնաբաժինը 2017թ. նվազել է մինչև 24 տոկոս, 2011թ.՝ 34 տոկոսից: 200 000-250 000 դրամ և 300 000 դրամից բարձր եկամուտ ունեցող տնային տնտեսությունների խմբերում նկատվել է 4 և 6 տոկոսային կետի աճ: Ընտրանքի տնային տնտեսությունների եկամուտի երկու ծայրերում առկա է տեսանելի փոփոխություն (*Գծապատկեր 8*):

Գծապատկեր 8. Տնային տնտեսության ծախսերը հարցմանը նախորդած ամսվա ընթացքում



62. Մի կողմից ավելի մեծ թիվ են կազմել այն հարցվածները, որոնք կորցրել են իրենց նախկին աշխատանքը: Միաժամանակ, ավելի շատ են տնային տնտեսությունները, որոնց եկամուտներն աճել են: Սա կարող է վկայել նաև պետական սոցիալական ապահովության համակարգի խնդիրների, դրա հետևանքով սոցիալական արդարությանն ուղղված պետական քաղաքականության և հարստության համահավասար բաշխման խնդիրների մասին: Սակայն վստահելի եզրակացություններ անելու համար հարկ է լրացուցիչ ուսումնասիրել տնտեսական միջավայրը:

63. Մյուս կողմից, հետաքրքրական է նաև ուսումնասիրել տնային տնտեսությունների ծախսերը, հստակեցնելու համար, թե արդյո՞ք ընտրանքում ընդգրկված տնային տնտեսությունները էական փոփոխությունների են ենթարկել իրենց ծախսերի կառուցվածքը: Ակնառու է, որ ի տարբերություն 2011 թվականի, երբ ծախսերի գերակշիռ մասն ուղղվում էր սննդին, 2017 թվականին չկար որևէ հիմնական ծախսային հոդված, որին բաժին ընկներ տնային տնտեսության եկամուտի «առյուծի բաժինը»: Սա կարող է վկայել մի շարք երևույթների մասին:

64. Այսպես, սա կարող է նշանակել, որ ներկա ընտրանքը ներառում է հարցվածների երկու առանձնացող խումբ, որոնցից մեկում միայն հիմնական կրթություն ունեցող, գործազրկության և աղքատության ավելի բարձր ռիսկերի ենթակա անձիք են, իսկ մյուս խմբում անձինք ունեն բարձրագույն կրթություն, որն ավելի մեծ ապահովություն է տալիս զբաղվածության և կայուն եկամուտի հարցերում:

65. Երկրորդ. սա կարող է վկայել երկրում սոցիալական կառուցվածքի քայքայման մասին, երբ խորանում է հասարակության երկու ծայրերի միջև անհավասարությունը, մեծանում է բևեռացումը, և այս դեպքում սննդի համար ծախսերի կրճատումը կարող է պայմանավորված լինել այլ պատճառներով: Եթե ավելի աղքատ տնային տնտեսությունները չեն կարող գնել մեծ թվով ապրանքներ և ստիպված են ընդհանուր եկամտի համեմատ նվազագույն մակարդակի պահել ծախսերի բացարձակ ծավալը, ապա հարուստ տնային տնտեսությունների դեպքում սա նշանակում է, որ սննդի համար ծախսվող եկամտի մասնաբաժինը կլինի ավելի քիչ՝ հարաբերական առումով: Երկու դեպքում էլ, սրա արդյունքում ձևավորվում է այն պատկերը, որն արտացոլված է *Գծապատկեր* 8-ում:

66. Երրորդ. սա կարող է նաև նշանակել, որ փոփոխությունների է ենթարկվել սննդի սպառման մշակույթը, երբ շատ գնելն ու քիչ սպառելը զիջում են տեղը հավասարակշռված սպառմանը, ինչպես նաև հանրային սննդի ծառայությունների ծավալի մեծացմանը, ինչը կարող է ներկայացված լինել որպես զվարճանք, որի ցուցանիշը 2017թ. աճել է: Ավելացել է նաև տնային

տնտեսության ծախսերի ևս մեկ հոդված՝ կրթությունը, որը 2011թ. 3 տոկոսից 2017թ. հասել է 11 տոկոսի:

67. Սա դարձյալ կարող է ունենալ մի շարք մեկնաբանություններ: Նախ, պատճառը կարող է լինել բուն ընտրանքի կառուցվածքը, ուր կրթական ավելի բարձր մակարդակ ունեցող հարցվողներն ավելի մեծ ուշադրություն են դարձնում կրթությանը և այդ նպատակով ավելի մեծ ծախսեր կատարում: Երկրորդ, սա կարող է նաև նշանակել, որ առանձնացված ավագ դպրոց ունեցող հանրակրթության նոր կառուցվածքը լրացուցիչ ավելացնում է տնային տնտեսությունների կրթական ծախսերի բեռը:

68. Անձնական եկամուտ ունեցող խմբի կանայք մասնակցություն են ունենում տնային տնտեսության եկամտում և այդ պատճառով ձեռք են բերում ներընտանեկան որոշումների կայացման հարցում բանակցային ավելի մեծ հնարավորություններ: Այս տեսանկյունից կարևոր է դիտարկել զբաղվածության և եկամուտների դինամիկան՝ պարզելու, թե ինչ աստիճանի այն կարող էր ազդել կանանց ձայնի և ազդեցության վրա: Այս հանգամանքը կարևորվում է հղիության արհեստական ընդհատման որոշում կայացնելու հարցում ընտանիքի անդամների ազդեցությունը քննելիս: Աճում է այն հարցվածների թիվը, որոնց պնդմամբ տնային աշխատանքն իրենց հիմնական զբաղմունքն է: Ի տարբերություն 2011 թվականի, երբ հարցվածների միայն 40 տոկոսն էր նշել, որ եկամուտ չունեցող տնային տնտեսուհի է, այսօր այդ թիվը հասել է 68 տոկոսի (*Գծապատկեր 9*):

69. Հատկանշական է, որ նրանք չեն նշում իրենց կարգավիճակը որպես գործազուրկ, ինչը 2017թ. հարցաշարում պատասխանի հնարավոր տարբերակ էր: Ինչպես առաջարկվում է 2017թ. զեկույցում, սա նշանակում է, այս կանայք չեն մտածել աշխատաշուկա մտնելու մասին: Սա համահունչ է նաև ըստ սեռերի տնտեսական ակտիվության ազգային տվյալներին: 2015թ. վիճակագրական տվյալները հուշում են, որ Հայաստանում կանանց միայն 55.2 տոկոսն է տնտեսապես ակտիվ՝ տղամարդկանց 73.2 տոկոսի համեմատ: Ամուսինների դեպքում աճում է զբաղվածությունը պետական ծառայության ոլորտում, կանանց դեպքում՝ ոլորտը ճշտված չէ և ընդգրկված է «այլ»-ի տակ, ինչը հնարավորություն չի տալիս պարզել նրանց կատարած աշխատանքի բնույթը:

Գծապատկեր 9. Հարցման մասնակիցների և նրանց ամուսինների/զուգընկերների հիմնական զբաղմունքը



70. Ներկայում, 2011թ. համեմատությամբ, ավելի մեծ թիվ են կազմում եկամուտ չունեցող կանայք (*Գծապատկեր 10*): Սա համահունչ է տնային տնտեսուհի լինելու իրենց պատասխանին, որն ավելին է, քան գործազրկությունը և վկայում է վատթարացող մշակութային նորմերի մասին, երբ

կնոջից առաջին հերթին ակնկալվում է երեխաների դաստիարակողի դերը՝ ի տարբերություն տղամարդու, ում վերապահվում է հիմնական վաստակողի դերը:

Գծապատկեր 10. Կնոջ ամսական եկամուտը



71. 2017թ. զեկույցում նշված է, որ 71.2 տոկոսը որպես հիմնական վաստակող նշել են ամուսիններին: Մյուս կողմից 10 տոկոսային կետով ավելացել է 30 000 - 50 000 դրամ ամսական եկամուտ ունեցող կանանց թիվը: Հաշվի առնելով 9-ամյա դպրոցը որպես կրթության բարձրագույն մակարդակ նշող հարցվածների և իրենց տնային տնտեսուհի ներկայացնողների թվի աճը, տնտեսական հնարավորություններ ընձեռող ծրագրերը չեն կարող բերել դրական արդյունքներ, քանի դեռ չի հաղթահարվել կանանց զբաղվածությունը խնամքի ու տնային աշխատանքի համեմատ երկրորդային համարելու խորացող նորմը:

72. Հարկ է ցույց տալ, թե կանանց զբաղվածությունը և անձնական եկամուտն ինչպես կարող են էապես խթանել տնային տնտեսության կայուն եկամուտն ու անվտանգությունը: Անհրաժեշտ է նաև ներկայացնել, թե որքան կարևոր է տնային տնտեսության ապահով եկամուտի համար աղջիկների ուսումնառության տարիների ավելացումը: Այսպես, շատ փոքրաթիվ են կանայք, ովքեր ունեն բացառապես դպրոցական կրթություն, որևէ եկամուտ («տնային տնտեսուհի» պատասխանածներն այստեղ դիտարկված չեն), պատկանում են բարձր եկամուտով տնային տնտեսությունների խմբին (ամսական 100 000 դրամից բարձր), (*Գծապատկեր 11*):

Գծապատկեր 11. Անձնական եկամուտը (PI) և տնային տնտեսության եկամուտը (HI)՝ ըստ կրթական մակարդակի, 2017թ.



73. Ամսական 50 000 - 100 000 դրամ եկամուտ ունեցող կանանց մեծ մասն ունի հետդպրոցական կրթություն և ներկայացրել է տնային տնտեսության բարձր եկամուտ: Այս եկամտային խմբի կանայք ապահովում են տնային տնտեսության ամսական եկամուտի մինչև 50 տոկոսը և հիմնականում ներկայացնում են տնային տնտեսությունների լայն շրջանակ, որոնց եկամուտի ստորին շեմը 50 000, իսկ վերինը՝ 200 000 դրամ է: Ենթադրվում է, որ նրանք պետք է ակնհայտ առավելություն ունենան ներընտանեկան որոշումների կայացման գործընթացում, քան ընդհանրապես եկամուտ չունեցող կանայք (*Գծապատկեր* 12):

Գծապատկեր 12. Տնային տնտեսությունների տեսակները, անձնական եկամուտը և որոշումների կայացումը տեսակները, 2017թ.



74. Վերջին տվյալների համաձայն տնային տնտեսության եկամտի և կանանց անձնական եկամտի հարաբերակցությունը, որն իր հերթին փոխկապակցված է կրթությանը, ցույց է տալիս փոխակերպումների որոշակի նախնական նշաններ, որոնք, վաղ փուլում ուշադրության չարժանանալու դեպքում, կարող են, մեծ հավանականությամբ, հաջորդ սերնդին կանգնեցնել սահմանափակ տնտեսական միջավայրում ապահով աշխատանք գտնելու լրացուցիչ կառուցվածքային խոչընդոտների առջև: Սա նշանակելու է, որ կրթական ավելի ցածր մակարդակով կանայք ունենալու են ավելի քիչ հեռանկարներ աշխատաշուկայում և, հետևաբար, ակտիվ աշխատուժին միանալու ավելի սահմանափակ ցանկություն, ինչն աղքատության և խոցելիության ավելի մեծ ռիսկերի է ենթարկելու նրանց և նրանց տնային տնտեսությունները:

75. Ավելին, ծնելիության ցածր մակարդակ և ծերացող բնակչություն ունեցող հասարակության համար, որտեղ անցում է կատարվում կենսաթոշակային բաշխողական համակարգի, ավելի ցածր եկամուտ ունեցող կանայք հետագայում՝ մեծ տարիքում հայտնվելու են աղքատության բարձր ռիսկի առջև: Այս հանգամանքը և, դրան զուգահեռ, տղամարդկանց կյանքի սպասվող ավելի կարճ տևողությունը, որը բազմաթիվ կանանց միայնակ է թողնում կենսաթոշակային տարիքում, մեծացնում է նրանց խոցելիությունը:

76. Ակնհայտ է, որ վերը նշված պատճառներով իրենց կերակրող/հիմնական վաստակող չհամարող կանայք յուրաքանչյուր ծննդաբերությունից ու երեխայի խնամքի շրջանից հետո զիջում են իրենց խիստ սահմանափակ դիրքերն աշխատաշուկայում (*Գծապատկեր 13*): 50 000 դրամից բարձր եկամտային խմբում ավելի մեծ թվով կանայք են առաջին ծննդաբերությունից և երեխայի խնամքի արձակուրդից հետո շուտ վերադառնում աշխատանքի: Սակայն, երբ դիտարկում ենք նույն եկամտային խմբի դինամիկան երրորդ երեխայի դեպքում, նկատելի է այդ թվի նվազում: Հաշվի առնելով, որ ընտրանքում հիմնականում ընդգրկված են 25-ից 35 տարեկան կանայք, ցուցանիշների նվազումը հարցվողների խմբի կառուցվածքի պատճառով բացառվում է:

77. Ընտրանքի հանդեպ կիրառելի թերևս միակ բացատրությունը ծնելիության մակարդակն է, որը աշխատանքի վերադառնալու ցածր մակարդակի հիմնական պատճառն է: Ի լրումն՝ հաջորդ առավել ակնհայտ պատճառն այն լրացուցիչ բեռն է, որը ներկայում կրում են կանայք և նրանց ընտանիքները, երբ փորձում են համադրել կնոջ զբաղվածությունը և երեխայի խնամքը:

78. Այս անկման մեկ այլ պատճառ կարող է լինել հմտությունների հետ մնալը՝ աշխատաշուկայի արագ փոփոխվող պահանջներից, ինչը կանանց խոցելի է դարձնում աշխատանքային գործունեությանը վերաինտեգրվելու առումով: Սակայն, հաշվի առնելով, որ վաղ մանկության տարիքի երեխաների խնամքի հաստատությունների համակարգը թերզարգացած է և դրանց մատուցած ծառայությունների հասանելիությունն ու մատչելիությունը խիստ սահմանափակ է (ինչը հաստատվում է նաև 3-6 տարեկան երեխաների ընտանիքների կողմից երեխայի ցերեկային խնամքի այս ծառայությունների հանդեպ մեծ պահանջարկով), կարելի է եզրակացնել, որ աշխատաշուկա վերադառնալու պատճառները կորցնում են իրենց սկզբնական նշանակությունը և տեղը զիջում խնամքի ապահովման ավելի ակնհայտ դարձող փաստարկներին, ինչն էլ ավելի է խորացնում տղամարդ-վաստակողի և կին-տնային տնտեսուհու կարծրատիպերի միջև անջրպետը:

79. Մյուս կողմից, ծնողների կողմից երեխաների խնամքի ծառայությունների մատուցման հանդեպ մեծ պահանջարկը (ինչի մասին վկայում է 3-6 տարեկանների խնամքի ծառայությունների սպառման բարձր մակարդակը) և մինչև 3 տարեկանների խնամքի հաստատությունների և/կամ ծառայությունների գրեթե հիմնարար բացակայությունն ուղղակիորեն նպաստում են աշխատաշուկայում իրենց տեղը պահպանել ցանկացող կանանց ծնելիության զսպմանը, հատկապես նրանց, ովքեր իրենց ընտանիքի հիմնական վաստակող են համարում: Հետևաբար, այն համոզումը, թե վաստակելն ու ընտանիք կերակրելը միայն տղամարդու գործառույթը չէ և անհրաժեշտ է այն համադրել կնոջ՝ որպես երեխայի խնամքի ապահովողի դերի հետ, անխուսափելիորեն հանգեցնում է այս հատվածի համար ծառայությունների ներդրմանն ու ընդլայնմանը:

Գծապատկեր 13. Հղիության և մայրության արձակուրդից հետո աշխատանքի վերադարձը՝ ըստ եկամտային խմբի, 2016թ.



Ձայնի իրավունքը և ներընտանեկան որոշումների կայացումը

80. Կանայք, որոնք համարում են իրենց տնային տնտեսության հիմնական վաստակող, ունեն որոշումների կայացման զգալի լիազորություններ: Հարցը տրվել է եկամուտ վաստակելու փաստը նշած կանանց: *Գծապատկեր 14-ում* հորիզոնական առանցքը ներկայացնում է հարցվածների պատասխաններն այն հարցին, թե ո՞ւմ են նրանք համարում իրենց տնային տնտեսության հիմնական վաստակողը: Գծապատկերը ներկայացնում է իրական որոշում կայացնողներին՝ ըստ հարցվածների ընկալման: Երկու հարցերի համադրությունը հստակ ցույց է տալիս, որ, երբ կինն իրեն համարում է տնային տնտեսության հիմնական վաստակողը, գերիշխում է որոշումների կայացման ընթացքում, իսկ մյուս պատասխանների դեպքերում՝ գերիշխում է որոշումների համատեղ կայացումը: Պատասխանի «միասին» տարբերակը պահանջում է լրացուցիչ վերլուծություն, պարզաբանելու համար, թե ինչ չափով և ինչպես է կողմերից յուրաքանչյուրը նպաստում որևէ հարցի շուրջ, այդ թվում՝ երեխայի սեռի նախապատվության վերաբերյալ որոշման կայացմանը:

Գծապատկեր 14. Տնային տնտեսության ներսում որոշումների կայացումն ու անձնական եկամուտը, 2017թ.



81. Երբ դիտարկվում է հարցվածների անձնական եկամուտը, որը հիմնականում տատանվում է 0-100 000 դրամի միջակայքում, որոշումները կայացնում են կանայք կամ իրենց զուգընկերների հետ: Հազվադեպ է, երբ աշխատող կանայք նշում են ամուսիններին՝ որպես որոշումների միանձնյա կայացնող:

82. Հետևաբար կարևոր է շարունակաբար բարելավել աշխատանքի պայմանները, այդ թվում՝ կանանց համար, ովքեր Հայաստանում միջինը վաստակում են 35% քիչ եկամուտ, քան տղամարդիկ, ինչը պայմանավորված է աշխատաշուկայում առկա մի շարք կառուցվածքային անհավասարություններով:

83. Ի լրումն, լրացուցիչ վերլուծություն է անհրաժեշտ՝ տնային տնտեսուհի ներկայանալու հիմքում ընկած պատճառները մեկնաբանելու համար, որոնք կարող են ի հայտ գալ, հաշվի առնելով, որ երեխային դաստիարակելու գործառույթներն ու կազմակերպումը գրեթե լիովին կնոջ ուսերին են դրված՝ թե՛ ինստիտուցիոնալ, թե՛ մշակութային առումներով, ինչպես նաև բխում են կնոջ՝ որպես իր ընտանիքի հիմնական խնամատար դեռևս գերիշխող ընկալումից՝ մեծապես սահմանափակելով տնային տնտեսությունից դուրս աշխատելու նրա հնարավորությունները: Այդուհանդերձ, նախքան խնամքի գործառույթների և կազմակերպման ուսումնասիրությանն

անցնելը, կարևոր է սպառիչ կերպով դիտարկել որոշումների կայացման լիազորություններն՝ ըստ տնային տնտեսությունների տեսակների (նուկլեար և ընդլայնված), ինչպես նաև դիտարկել քաղաքային և գյուղական բնակավայրերի առանձնահատկությունները:

Գծապատկեր 15. Որոշումների կայացումը՝ ըստ հիմնական վաստակողի



84. Այն դեպքերում, երբ կինը եկամուտ չի վաստակում, վտանգված է նրա մասնակցությունը տնային տնտեսության որոշումների կայացմանը: Նուկլեար ընտանիքներում ապրուստ չվաստակող կանայք սովորաբար զուրկ են ընտանիքի ներսում սեփական ձայնի իրավունքից (*Գծապատկեր 14*): Որոշումների մեծ մասը կայացվում է զուգընկերոջ կողմից և/կամ միասին: Այս դեպքում «միասին» տարբերակը պահանջում է լրացուցիչ մանրամասնում և ուսումնասիրություն, որպեսզի պարզ դառնա համատեղ որոշումների կայացման որակը: Այս միտումը հատուկ է քաղաքաբնակ նուկլեար տնային տնտեսություններին, իսկ գյուղաբնակ եկամուտ չունեցող կանայք գրեթե չունեն ո՛չ սեփական ձայնի իրավունք, ո՛չ էլ կոլեկտիվ մասնակցություն ընտանիքում որոշումների կայացմանը (*Գծապատկեր 16*): Եթե գյուղաբնակ, նուկլեար ընտանիքների մեծ մասում կանայք վաստակեին մինչև 50 000 դրամ ամսական եկամուտ, նրանք կկարողանային ապահովել տնային տնտեսության ընդհանուր եկամուտի 25-ից 50 տոկոսը, ինչը կընդլայներ ընտանիքի ներսում որոշումների կայացման նրանց հնարավորությունները:

Գծապատկեր 16. Գյուղական ընտանիքի տեսակները, անձնական եկամուտը և որոշումների կայացումը, 2017թ.



85. Ընդլայնված ընտանիքների համեմատ, նուկլեար ընտանիքների կանայք հայտարարում են կրթությանն ուղղված տնային տնտեսության ավելի մեծ ծախսեր, ինչը թերևս կարելի է բացատրել մի շարք փաստարկներով (*Գծապատկեր 17*): Առաջին և առավել հավանական բացատրությունը կարող է լինել վաղ մանկության շրջանի խնամքի՝ հիմնականում մասնավոր ծառայությունները, որոնց խիստ սահմանափակ հասանելիությունն ու մատչելիությունը չեն համապատասխանում եկամուտ վաստակող մայրերի կարիքներին: Այս պատճառով էլ, ի տարբերություն ընդլայնված ընտանիքի, որտեղ հիմնականում ամուսնական զույգի ծնողներն են ապահովում երեխայի խնամքը, նուկլեար տնային տնտեսությունների կանայք մեծամասամբ չունեն մասնավոր հաստատությունների կամ դայակների ծառայություններից օգտվելուն այլընտրանք:

86. Երկրորդ. հնարավոր է, որ ընդլայնված ընտանիքում, անձնական եկամուտը, հատկապես, երբ այն չի գերազանցում ամսական 30 000 դրամը, հանգեցնի ծախսերի կենտրոնացմանը սննդի և անմիջական կարիքների վրա, թողնելով կրթությունը ոչ ֆինանսական այլ միջոցներով կարգավորելու հույսին:

87. Թե՛ քաղաքաբնակ, թե՛ գյուղաբնակ տնային տնտեսություններում ընդլայնված ընտանիքները կարող են իրենց թույլ տալ երեխայի խնամքն ու կրթությունը, հատկապես՝ վաղ մանկության տարիներին համարել «առաձգական» ծառայություն և մասնակիորեն կամ ամբողջությամբ անտեսել այն: Ի տարբերություն ընդլայնված ընտանիքների՝ նուկլեար ընտանիքների կանայք իրենց ամբողջ եկամտի մեկ երրորդից ավելին հատկացնում են կրթությանը, բացառությամբ գյուղական բնակավայրերի մինչև 30 000 դրամ եկամտային խումբը, որը կրթության ծախսերի մասին չի հայտնել ընդհանրապես:

88. Ցածր եկամտի և վաղ մանկության շրջանում երեխայի խնամքի ծառայությունների ֆինանսական անմատչելիության համադրությունը կարող են ստիպել բազմաթիվ կանանց՝ իրենց առավել պտղաբեր տարիներին հրաժարվել աշխատանքից՝ հանուն երեխայի խնամքի և դաստիարակության: Մյուս կողմից, սա կարող է ստիպել հատկապես քաղաքաբնակ նուկլեար ընտանիքների կանանց հրաժարվել հաջորդ երեխային ունենալուց, որպեսզի պահպանեն իրենց դիրքն աշխատաշուկայում:

89. Զբաղվածությունն ու խնամքը կնոջը կանգնեցնում են խաչմերուկում, ստիպելով նրան դժվարին ընտրություն կատարել աշխատաշուկան լքելու, հղիությունը հետաձգելու կամ հղիությունների թիվը կրճատելու միջև: Բնականաբար, սա ընտանիքի՝ պտղի սեռով պայմանավորված խտրական պլանավորման կարևոր գործոններից մեկն է, որը մեծացնում է նորածինների սեռերի խախտված համամասնությունը:

Գծապատկեր 17. Կանանց անձնական եկամուտը և ծախսերը՝ ըստ տնային տնտեսության տեսակի, 2017թ.



Երեխայի խնամքի պարտականությունները և ընտանիքին առաջարկվող ծառայությունները

90. 2011թ. հետազոտության ընտրանքի համեմատ՝ 2017 թվականին, բացառությամբ առաջին և երկրորդ հղիությունների, որոնք ավարտվել են կենդանածնությամբ, կենդանի ծնունդների թիվը նվազել է (*Գծապատկեր 18*):

91. Միաժամանակ, աննշան աճ է նկատվում հինգերորդ հղիությունից սկսած: Սա, թերևս, կարելի է վերագրել ընտրանքի կառուցվածքի փոփոխությանը, քանի որ 2017թ. ընտրանքում հարցվողները հիմնականում ունեն կամ միայն հիմնական, կամ բարձրագույն կրթություն, ինչը տարբերվում է նախորդ ընտրանքից: Այդուհանդերձ, հետազոտության մասնակցած բոլոր կանանց ընդհանուր պատկերն ապացուցում է, որ ծնելիության ցուցանիշը ցածր է ՀՀ ազգային վիճակագրության ծառայության տվյալներում ներկայացված մակարդակներից:

92. Թեպետ այս երևույթը կարող է ունենալ մի շարք պատճառներ, այս բաժնում հետաքրքիր է առանձնացնել ընտանիքների համար երեխայի վաղ մանկության շրջանի խնամքի ծառայությունների մատչելիությունը, ինչը զգալի չափով որոշում է կնոջ պատրաստակամությունը՝ համադրելու խնամքը և զբաղվածությունը, հետևաբար՝ անհաղթահարելի կորուստներից/զիջումներից խուսափելու հնարավորությունը:

Գծապատկեր 18. Հղիությունների քանակը



93. Աշխատող կանանց մեծ մասը նշել է, որ իրենց երեխաների խնամքն ապահովել են ընտանիքները (*Գծապատկեր 19*): Հետազոտությանը մասնակցած յուրաքանչյուր 100 աշխատող կնոջից 41-ը նշել է, որ երեխաներին խնամել է ընտանիքի անդամներից մեկը: Անձամբ երեխաների խնամքն ապահովելու փաստը նշել է 100 հարցվողների շուրջ կեսը՝ 49 կին: Երեխայի վաղ մանկության շրջանի խնամքի ծառայությունների բացակայության պայմաններում սա նշանակում է, որ հանուն երեխաների խնամքի կինը նվազագույնը 3 տարով հրաժարվել է զբաղվածությունից: Մանկապարտեզները մատչելի են եղել 100 հարցված կնոջից միայն 8-ին: Վերջապես, շատ հազվադեպ (100 հարցվողներից 1-ը) նշվել է դայակի օգնությամբ երեխայի խնամքի կազմակերպման տարբերակը, ինչը կարելի է բացատրել կանանց համեստ ամսական միջին եկամտով, որը տատանվում է 50 000-ից 100 000 դրամի միջև, ինչն էլ դայակի ծառայությունները աշխատող կանանց մեծ մասի համար դարձնում է ֆինանսապես անմատչելի:

Գծապատկեր 19. Մինչև երեք տարեկան երեխայի խնամքի ապահովումը, 2017թ.



94. Ի տարբերություն մանկական խնամքի վաղ տարիների՝ 3-ից 6 տարեկան երեխաներ ունեցող կանայք ունեն ընտրության ավելի տարբերակներ, քան ինքնուրույն խնամքը կամ ընտանիքի օժանդակությունը (*Գծապատկեր 20*): Երեխայի խնամքի ծառայությունների ապահովման հարցում 100 հարցվածից 34-38 աշխատող կին դեռևս դիմում են ընտանիքի անդամի աջակցությանը: Այս դեպքում մանկապարտեզները ծառայություններ են մատուցել 100 հարցված կանանցից 42-ին: Այդուհանդերձ, յուրաքանչյուր հինգերորդ աշխատող մայր նախընտրում է խնամել երեխային մինչև 6 տարեկան հասակը՝ լրջորեն վտանգելով զբաղվածության իր հեռանկարները կամ ստիպված լինելով աշխատել ոչ լրիվ դրույքով:

Գծապատկեր 20. Երեքից վեց տարեկան երեխայի խնամքի ապահովումը, 2017թ.



95. Նույնիսկ երեխաների դպրոցական կրթությունը սկսելուց հետո և, հատկապես, ուսումնառության առաջին տարիներին, երեխաների խնամքը դեռևս մնում է խնդիր, որը պահանջում է ինստիտուցիոնալ լուծումներ՝ ընտանիքների և, մասնավորապես, աշխատող կանանց բեռը թեթևացնելու համար (*Գծապատկեր 21*): Աշխատող կանանց շուրջ կեսը նշել է, որ իրենց երեխաների խնամքն ապահովել են ընտանիքի անդամները, իսկ մյուս կեսն ինքնուրույն է ապահովել այդ խնամքը: Սա համահունչ է ՄԱԲՀ-ի «Տղամարդիկ և գենդերային

հավասարության հիմնախնդիրը Հայաստանում» 2016թ. զեկույցին:[9] Ըստ զեկույցի, հայրերի 54.8 տոկոսը համաձայն կամ անվերապահ համաձայն են, որ աշխատանքի պատճառով շատ քիչ ժամանակ են անցկացնում իրենց երեխաների հետ, իսկ 89.9 տոկոսը համաձայն է կամ անվերապահորեն համաձայն է, որ իրենց հիմնական դերն ընտանիքը կերակրելն է: Ավելին, հայրերի միայն 11 տոկոսն է նշել, որ դպրոց կամ ցերեկային խնամքի կենտրոն է տանում կամ այնտեղից տուն բերում երեխային:

Գծապատկեր 21. Ցածր դասարաններում երեխայի խնամքի ապահովումը, 2017թ.



96. Վաղ տարիքի երեխաների համար խնամքի հաստատությունների և ծառայությունների բացակայությունը, որին գումարվում են ծնողների գենդերային դերերի սահմանափակումները, ծանր բեռ է դնում կնոջ ուսերին՝ նախևառաջ վտանգելով նրա հեռանկարներն աշխատաշուկայում, դուրս մղելով նրան հանրային տիրույթից, սահմանափակելով նրա ընտրությունը կես դրույքով աշխատանքով, մղելով անկայուն աշխատանքի: Այն սահմանափակում է նաև ցանկալի հղիության հնարավորությունները, քանի որ յուրաքանչյուր երեխայի հետ մոր համար ավելանում է խնամքի բեռը, գրեթե տեղ չթողնելով անձնական անվտանգության և տնտեսական անկախության համար, որոնք անհրաժեշտ են ձայնի իրավունքից օգտվելու և անձնական որոշումներ կայացնելու համար:

97. Ի տարբերություն աշխատող մայրերի, տանը մնալը և տնային տնտեսուհի լինելը խնամատարի դեր ինքնին չի ենթադրում: Թեպետ բացարձակ իմաստով տնային տնտեսուհիները առաջին երեք հղիության մասին հայտարարած կանանց գերակշիռ մասն են կազմում, նրանք, միաժամանակ, ցուցաբերում են երեխայի խնամքի այնպիսի մակարդակ, որը համեմատելի է մայրերի հետ, որոնք համարում են իրենց զբաղված կամ գործազուրկ, բայց եկամուտ չեն վաստակում: Սա նրանց համադրելի է դարձնում այն հարցվածներին, որոնք իրենց համարել են եկամուտ չվաստակող տնային տնտեսուհի (*Գծապատկեր 22*): Հատկանշական է, որ առաջին 3 հղիությունների արդյունքում ծնված երեխաների խնամքը հիմնականում ապահովել է ընտանիքի որևէ անդամ: Սա հուշում է, որ տնային տնտեսուհիների մի մասը տանն է մնում ոչ թե անհրաժեշտությունից ելնելով, երբ հարկ է երեխայի խնամքն ապահովել մի միջավայրում, որտեղ հասանելի և ֆինանսապես մատչելի չեն երեխայի խնամքի ծառայությունները, այլ տանն են մնում ավելի շատ և ավելի շուտ մշակութային նորմերում արմատավորված, ինչպես նաև վաղ ամուսնության և ծննդաբերության նորմին համապատասխանելու համար դպրոցական ուսումը վաղ ընդհատելու հետևանքով ամենայն հավանականությամբ բաց թողնված հնարավորությունների պատճառներով:

[9] «Տղամարդիկ և գենդերային հավասարության հիմնախնդիրը Հայաստանում. Սոցիոլոգիական հետազոտության արդյունքների զեկույց», ՄԱԲՀ, Երևան 2016

Գծապատկեր 22. Տնային տնտեսուհիների, զբաղված և եկամուտ ու զբաղվածություն չունեցող կանանց երեխաների խնամքը, 2017թ.



98. Եկամուտ վաստակող կանայք ունեն ավելի քիչ երեխաներ, քան իրենց տարեկից տնային տնտեսուհիները, սակայն գերազանցում են նրանց երեխայի խնամքի ծառայությունների հարցում (*Գծապատկեր 23*): Այսպես, եթե տնային տնտեսուհիների միայն 32-ից 43 տոկոսն են նշում իրենց երեխաների խնամատարը լինելու փաստը, բոլոր եկամտային խմբերի աշխատող կանանց 54-ից 61 տոկոսն է հայտարարում, որ առաջին 3 տարվա ընթացքում իրենք են խնամել երեխաներին: Հետևաբար, եթե աշխատող կանայք ունենան աջակցող խնամքի ծառայություններ, հատկապես երեխայի կյանքի վաղ տարիներին, նրանք կդիտարկեն երրորդ հղիության հետ ի հայտ եկող բեկումնային կետից հետո էլ վերարտադրողականությունը շարունակելու հարցը: Սա կթեթևացնի նաև նախածննդյան փուլում սեռի ընտրության ճնշումը, որը, զարմանալիորեն, բավականին բարձր էր ավելի կրթված մայրերի շրջանում, որոնք ի տարբերություն իրենց տարեկից տնային տնտեսուհիների, չեն կարող թույլ տալ իրենց շարունակել ընտանիքի պլանավորումը երրորդ երեխայից հետո:

Գծապատկեր 23. Աշխատող կանայք՝ եկամտային բոլոր խմբերում և երեխայի խնամքի տրամադրումը, 2016թ.



Սեռի նախապատվությունը Հայաստանում

99. Զգալիորեն նվազել է տղաներին տրվող նախապատվությունը, որին փոխարինում է ապագա երեխայի հարցում սեռերից որևէ մեկին առավելություն չտալու պատասխանը (*Գծապատկեր 24*): Ի տարբերություն 2011 թվականի, երբ 59.3 տոկոսը բացահայտ համոզմունք էր հայտնել, որ միջավայրը (այսինքն՝ հղման ցանցը) նախապատվությունը տալիս է տղա երեխային, այսօր այդ ցուցանիշը նվազել է մինչև 36.7 տոկոս: Հարցվողների միայն 12.9 տոկոսն է նշել իրենց ընտանիքում տղա երեխայի նախապատվության առկայության մասին՝ 2011թ. 45.3 տոկոսի համեմատ:

100. Միաժամանակ, աղջիկ երեխայի նախապատվության հարցում էական փոփոխություններ չկան: Մասնավորապես, աղջիկ երեխայի նախապատվության ցուցանիշը նույնպես նվազել է, եթե խոսքը գնում է ներընտանեկան նախապատվությունների մասին: Փոխարենը, զգալիորեն աճել նախապատվություն չունենալու ցուցանիշը, հատկապես ներընտանեկան նախապատվությունների տեսանկյունից:

Գծապատկեր 24. Սեռի նախապատվությունը



101. Սա կարելի է վերագրել նաև սոցիալական նոր ակնկալիքների ձևավորմանը, ինչն իրականում, մղում է հարցվածներին տալ այն պատասխանները, որոնք իրենց համոզմամբ ակնկալվում են իրենցից, որպեսզի չկորցնեն իրենց դիրքերը: Սա հուշում է նաև, որ 2013 թվականից իրականացված բազմազան քարոզարշավները՝ հաղորդակցության տարբեր միջոցների ու գործիքների համադրությամբ, հասել են հարցվածների մեծ մասին և ստիպել նրանց առնվազն հանրային դաշտում՝ նույնիսկ գաղտնի հարցմանը մասնակցելու դեպքում, ցուցադրել նախապատվությունների բացակայությունը, քանի որ դա է եղել քարոզարշավի հիմնական կարգախոսը:

102. Վերջնական եզրակացությունների համար հարկ է կիրառել վարքագծի հետազոտման այլ գործիքներ՝ պարզելու, թե ի՞նչ չափով են անհատները շրջադարձել իրենց վարքագծային պատկերացումները: Այդուհանդերձ, հստակ է, որ իրականացված քարոզարշավները, թիրախավորելով տղաների նախապատվության «բազմակարծիք տգիտությունը» և ստեղծելով անհատական ընտրության ու որոշումների կայացման ավելի լայն հնարավորություններ, թուլացրել են հարցվածների հղման ցանցերը:

103. Աշխատող կանայք ապագա երեխայի սեռի ընտրության հարցում ավելի ծանրակշիռ ձայն ունեն, քան անձնական միջոցներ չունեցողները: Երբ հարց է բարձրացվել, թե որքանո՞վ է կնոջ ձայնը հաշվի առնվում ապագա երեխայի սեռը որոշելու ժամանակ, պարզվել է, որ կանանց եկամուտի

աճին զուգահեռ ավելանում է նաև նրանց ազդեցությունը վերջնական որոշման վրա (*Գծապատկեր 25*):

104. Թեպետ աշխատող կանանց մեծ մասը նշել մինչև 100 000 դրամ անձնական եկամուտ, այն փաստը, որ նրանք ապահովում են տնային տնտեսության միջոցների մինչև 50 տոկոսը ստեղծել է նրանց համար իրավիճակ, երբ նրանց ձայնն ավելի ազդեցիկ է, քան, օրինակ, 300 000 դրամից բարձր ընդհանուր ամսական եկամուտ ունեցող տնային տնտեսությունում 150 000 դրամ անձնական եկամուտ ունեցող կնոջ ձայնը:

105. Կանանց ֆինանսական դիրքի բարելավումը և նրանց զբաղվածության հնարավորությունների ընդլայնումը կստեղծեն մի իրավիճակ, երբ նրանք զգալի ազդեցություն կունենան նախապատվության դինամիկայի վրա: Սա, իհարկե, արդյունք չի ունենա, եթե աղջիկներին թերարժևորող կարծրատիպերի կոտրելուն ուղղված քարոզարշավներին զուգահեռ, ֆինանսական դիրքը բարելավելու միջոցով ձայնի իրավունքից օգտվելու ավելի լայն հնարավորություններ չընձեռնվեն կանանց:

106. Այդուհանդերձ, ֆինանսական դիրքը կնոջ ազատ ընտրությունն ապահովելու համար անհրաժեշտ նախապայման է: Այսպես, ՄԱԲՀ-ի «Տղամարդիկ և գենդերային հավասարության հիմնախնդիրը Հայաստանում» 2016թ. զեկույցը փաստում է, որ հղիության արհեստական ընդհատման դեպքերի 92.9 տոկոսի պարագայում կնոջն աջակցում են տղամարդ զուգընկերները: Սա, իրականում, բացատրում է, թե ինչու և ինչպես են շատ որոշումներ կայացվում «միասին»: Նույնիսկ նման իրավիճակում կինը հաճախ հարկադրված է դիմել զուգընկերոջը՝ հղիության արհեստական ընդհատման համար ֆինանսական միջոցներ հայթայթելու նպատակով: Եթե կինն աշխատանք և/կամ լրացուցիչ ֆինանսական միջոցներ ունենար իր տրամադրության տակ, վերարտադրողականությանը վերաբերող որոշումներում նրա անձնական անկախությունը կընդլայնվեր, պայմանով, որ խիստ վերահսկող սոցիալական նորմերի պատճառով կարծրատիպերն էապես չեն սահմանափակում նրա ընտրությունը:

Գծապատկեր 25. Երեխայի սեռը որոշելիս կնոջ ձայնի ազդեցությունը՝ ըստ անձնական եկամտի, 2017թ.



107. Երբ դիտարկվում են սեռի ընտրության նախապատվությունը և անձնական եկամուտը կամ ըստ ոլորտների զբաղվածության տեսակները, կանայք ավելի մեծ նախապատվություն են տալիս տղա երեխային, ինչը հուշում է, որ միայն անձնական եկամտի աճը կամ կրթական մակարդակի բարձրացումը չեն կարող լուծել խնդիրը: Խնդիրն ավելի խորն արմատներ ունի, որոնք պայմանավորված են ցանկացած անհատի՝ անկախ նրա սեռից, կրթության մակարդակից և/կամ բնակավայրից, վարքագիծը ձևավորող ու սահմանող սոցիալական նորմերով:

108. 2011 և 2017 թվականների ֆոկուս խմբերը վերհանել են քաղաքային բնակավայրերում վերջին հինգ տարիներին ճնշումների թուլացման միտում, ինչն այդքան էլ ակնհայտ չէ գյուղական բնակավայրերի դեպքում: Այդուհանդերձ, հատկապես Արցախյան հակամարտության շփման գծում վերջին զինված ընդհարումները և երիտասարդների շրջանում կորուստները վերահաստատել են տղամարդկանց կարևորությունը, որոնք կարող են անձեռնմխելի պահել առաջնագիծը: Այս հանգամանքը և արտագաղթը խթանել են ավելի շատ տղաներ ծնելու կարևորությունը՝ երկրում հավասարակշռությունը պահպանելու համար:

109. 2017թ. հետազոտության եզրակացություններից մեկում նշված է, որ աղջիկ երեխայի ծնունդը հաճախ կապվում է հոգսերի, իսկ տղայինը՝ ուրախության հետ: Սա վկայում է այն մասին, որ տղաներ ունենալու նախապատվության պատճառներում 2011թ. արձանագրած վիճակը պահպանվել է (*Գծապատկեր 27*): Ի տարբերություն տղա երեխային տրվող նախապատվությանը, թե՛ 2011 և թե՛ 2017 թվականին աղջկա դեպքում նախապատվություն չունենալն ավելի շուտ պայմանավորված էր բացասական հետևանքներից խուսափելու հանգամանքով (*Գծապատկեր 26*): Տպավորություն է ստեղծվում, որ նախապատվության համակարգը մեծապես հիմնված է հետևյալ գաղափարների վրա. «ինչ լավ է տղա ունենալը» և «ինչ վատ կլինի, եթե մարդ աղջիկ ունենա» (կամ տղա չունենա): Եթե աղջիկ երեխայի հետ կապված բացասական նախապատվություններն ամբողջությամբ չփոխակերպվեն, հակակրանքը սնուցող գաղափարների համապարփակ վերափոխման միջոցով, ապա որևէ միջամտություն չի կարող մնայուն արդյունքներ ապահովել և ցանկացած լուրջ ցնցում կարող է կարճ ժամանակահատվածում ամեն բան վերադարձնել «ի արատավոր շրջանս յուր», քանի որ միայն անմիջապես ընտանիքում և սոցիալական միջավայրում ճնշումները թուլացնելը, ինչը համատեքստի տեսանկյունից անհրաժեշտ է, բավարար չի լինի արժեքային փոփոխությունների համար:

Գծապատկեր 26. Դուստր չցանկանալու պատճառները, 2011թ



Գծապատկեր 27. Տղայի նախապատվության պատճառները, 2011



Եզրակացություններ

110. Վերջին վեց տարվա ընթացքում հանրային կարծիքը տղա երեխայի նախապատվության վերաբերյալ ակնհայտորեն փոխվել է՝ այն ինչ համարվում էր նորմալ և ընդունելի այժմ սկսում է ընկալվել որպես անցանկալի: 2017թ. արդյունքները և սեռի հարցում նախապատվություն չունեցող հարցվողների թվի աճը վկայում են սոցիալապես ընդունելի շեղվածության շրջադարձի մասին: Ավելին, անձինք, ովքեր հաճախ դրդված էին իրենց կյանքի մերձավոր և ազդեցիկ շրջապատի ենթադրյալ ակնկալիքներին հարմարեցված վարքագիծ դրսևորել, տղա երեխայի նախապատվության շուրջ «հավաքական տգիտության» (pluralistic ignorance) նվազման արդյունքում, հայտնվել են համեմատաբար բարենպաստ պայմաններում, որոնք նվազ ճնշող են, հետևաբար, ավելի մեծ հնարավորություն են տալիս կատարել գործողություններ, որոնք պայմանավորված չեն առկա սոցիալական նորմերով:

111. Այդուհանդերձ, սոցիալական նորմերում փոփոխություն ի հայտ բերելու և ստեղծված հնարավորությունները լավ օգտագործելու համար անհրաժեշտ է վերանայել աղջիկ երեխայի ընկալումը, որի ծնունդը տղայի համեմատ դիտվում է որպես «պարտություն»: Փոխարենը հարկ է աղջիկ երեխային կապակցել հաղթողի կերպարի հետ՝ ճիշտ այնպես, ինչպես տղայի կերպարն է փոխկապակցվում հաղթանակի և, ամենակարևորը, վաստակող-կերակրողի կերպարի հետ: Հետևաբար, կարևոր է լուծել աղջիկների մեկնարկային հնարավորությունների ու դերի բարելավման խնդիրը, որպեսզի նրանք ավելի մեծ աջակցություն ապահովեն իրենց և ընտանիքներին: Սա անմիջականորեն առաջ է բերում ենթադրություն (որը ապացույցների միջոցով հաստատում է վերլուծությունը), որ ծննդաբերողի և վաստակողի գործառույթներն արդյունավետ կերպով համադրելու համատեքստում աշխատող կանանց աջակցելու և աշխատաշուկա նոր մուտք գործողներին աջակցելու դեպքում նրանց համար կստեղծվեն տնտեսական ավելի մեծ հնարավորություններ՝ (ա) մասնակցելու տնային տնտեսության եկամուտի ձևավորմանը և (բ) ներընտանեկան որոշումների կայացման խնդրում ավելի հզոր բանակցային դիրքեր ունենալուն:

112. Որպեսզի դա տեղի չունենա կնոջ վերարտադրողական գործառույթները հետաձգելու հաշվին, ինչը կարող է խնդրահարույց դառնալ հաջորդ սերնդի համար, կամ տնտեսապես ակտիվ մնալու նպատակով երրորդ հղիությունից հետո վերարտադրությունը դադարացնելու/ընդհատելու հաշվին, ինչը մեծապես կսահմանափակի ծնելիության մակարդակը, ուստի և կխթանի նախածննդյան փուլում սեռի ընտրությունն ի նպաստ տղա երեխաների, ծայրաստիճան կարևոր է հաշվի առնել կնոջ՝ խնամքի և զբաղվածության համադրման հնարավորությունների ընդլայնումը: Սա, առաջին հերթին, հնարավոր է երեխայի ծնունդից մինչև դպրոցի առաջին տարիներն ընդգրկող խնամքի՝ հասարակության տարբեր հատվածներին հասանելի և մատչելի ծառայություններ ապահովելու միջոցով:

113. Կարևոր է նաև ազատել աշխատող կանանց կրկնակի բեռից՝ թեթևացնելով նրանց ծնողական պարտականությունները՝ երեխայի խնամքի գործում ավելի լայն ընդգրկելով հայրերին: Ընդունված է, որ երեխայի դաստիարակության հարցում գենդերային դերերի ավելի մեծ ճկունության և կնոջը վաստակողի ավելի ընդլայնված դեր վերապահելու դեպքում, կանանց անվտանգության զգացումն աստիճանաբար բարձրանում է՝ ազդելով ընտրության առաձգականության վրա:

Առաջարկություններ

114. Անհրաժեշտ է ընդլայնել կանանց մասնակցությունն աշխատուժում: Անհրաժեշտ է ընդլայնել աշխատաշուկայում մնալու՝ աշխատող մայրերի ընտրության հնարավորությունները: Սա նշանակում է, որ աշխատաշուկա վերադառնալուն աջակցող իրավական կարգավորման վերլուծությունը պետք է օգտագործվի պետական և մասնավոր հատվածներում ընթացիկ պրակտիկայի ներկա վիճակը շտկելու համար: Կարևոր է հասկանալ, թե կանայք իրականում որքանով են պաշտպանված և հարկադրված չեն իրենց դիրքերը պահպանելու նպատակով հետաձգել կամ ընդհատել հղիությունը:

115. Երեխայի խնամքն ապահովելու նպատակով անհրաժեշտ է ձևավորել հասանելի և մատչելի ծառայությունների անխզելի շղթա, որն իրապես կթեթևացնի է մայրերի բեռը: Այս ծառայությունների բացակայությունը, ճկուն չլինելը, ֆինանսական անմատչելիությունը և անհասանելիությունը հանգեցնում են շուկայից ավելի երկարատև բացակայելուն, շուկա վերստին մուտք գործելու բարդության և հիմնականում ոչ լրիվ դրույքով անկայուն ու ռիսկային աշխատանքների համաձայնելու ավելի մեծ պատրաստակամության: Սա նշանակում է նաև, որ կանայք պատրաստ են համաձայնել աշխատանքների, որոնց համար վճարում են ավելի քիչ կամ առանձին ժամանակահատվածներում զրկված են վաստակից:

116. Անհրաժեշտ է գնահատել երեխայի խնամքի հաստատություններն ու ենթակառուցվածքները, հատկապես՝ մասնավորները, պահանջարկի բազայի մասին փաստեր և տվյալներ ձևավորելու նպատակով, որոնք հետագայում կարող են դրվել համաֆինանսավորվող և համատեղ, պետական-մասնավոր, համայնքահեն ու կազմակերպական հնարավոր այլ տարբերակների մշակման հիմքում: Տարբերակներ, որոնք կարող են ներդրվել առանց հանրային բյուջեի վրա ծանրանալու, այլ փոխարենը կհանգեցնեն խնամքի և աշխատանքի գործառույթների ավելի լավ համադրության:

117. Աշխատաշուկա հաջող մուտք ապահովելու համար հարկ է երաշխավորել, որ աշխատող կանայք չդիտարկվեն որպես իրենց ապագա կամ ներկա ամուսինների վաստակողի դերի երկրորդող: Սա նշանակում է, որ աղջիկների վաղ կողմնորոշումը դեպի մրցակցային մասնագիտություններ պետք է դառնա կրթական համակարգի ավագ դասարաններում ներառված կարևորագույն գործառույթ:

118. Ծնողավարման դերերը զգալի վերափոխման կարիք ունեն: Ներկայում կանայք կրում են մայրության և զբաղվածության կրկնակի բեռը: Սա, իրականում, նպաստում է ընտանիքի վաղ պլանավորման պրակտիկային, որն ընդհատում է վերարտադրողական գործառույթը, քանի որ խնամքի շուրջ 90 տոկոսի ապահովման համադրությունը լրիվ դրույքով զբաղվածության հետ ստիպում է կանանց ընտրել գործառույթներից մեկը: Աշխատող կանայք հակված են հրաժարվել իրենց երրորդ, իսկ ավելի հաստատ՝ չորրորդ հնարավոր հղիությունից: Սա նվազ տարածված երևույթ է նրանց չաշխատող հասակակիցների շրջանում:

119. Ակնհայտ է և նոր սոցիալական նորմի ձևավորման հրամայականը, որը կնվազեցնի տղա երեխայի նախապատվության աղբյուր հանդիսացող և համապատասխան սոցիալական ակնկալիքներ հաղորդող սոցիալական միջավայրի ճնշումները: Ներկա ձեռքբերումները կարիք ունեն սոցիալական նորմերի հաստատման ճանապարհով ամրացման: Իսկ մինչ այդ, յուրաքանչյուր կտրուկ աննպաստ փոփոխություն, օրինակ՝ հակամարտություն սրացումը, տնտեսական ճգնաժամը, կարող է նոր թափ հաղորդել շրջապատի ճնշումը սնող նորմերին: Սրա համար անհրաժեշտ է ներկայացնել վաստակող ու հաջողակ կանանց դերային մոդելներ, համահավասար ծնողավարման օրինակներ, որոնք պատկերում են զբաղվածության և խնամքի կրկնակի պարտականություններ կրող անհատների՝ թե՛ կանանց և թե՛ տղամարդկանց, առանց սեռի հիմքով խտրականության:

«Պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքար» ծրագիրն իրականացվում է 2015 թվականի մայիսից, Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի կողմից, Սեյվ դը չիլդրեն նեդերլենդի, Արմավիրի զարգացման կենտրոնի, Մարտունու կանանց համայնքային խորհրդի և Սեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլի հետ համագործակցությամբ: Այն ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից, որի ներդրումը կազմում է շուրջ 750,000 եվրո:

Ծրագրի նպատակն է նպաստել Հայաստանում պտղի սեռի խտրական ընտրության մակարդակի նվազեցմանը:

Եվրահանձնաժողովը Եվրոպական միության գործադիր մարմինն է

«Եվրոպական միությունը կազմված է 28 անդամ-պետություններից, որոնք որոշել են միակցել իրենց նորարարական մոտեցումները, ռեսուրսներն ու ճակատագրերը: Հիսունամյա ծավալման արդյունքում նրանք ստեղծել են կայունության, ժողովրդավարության և կայուն զարգացման մի միջավայր, որտեղ պահպանվում է մշակութային բազմազանությունը, հանդուրժողականությունն ու անձի ազատությունը: Եվրոպական միությունը պարտավորություն է ստանձնել՝ կիսելու նվաճումներն ու արժեքները իր սահմաններից դուրս գտնվող երկրների ու իր սահմաններից դուրս բնակվող ժողովուրդների հետ»:

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը, և այն որևէ ձևով չի արտահայտում Եվրոպական միության տեսակետները: